№ 213 ԿԻՐԱԿԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1

1906

ԿԻՐԱԿԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1 № 213

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՐՏԻՍՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ
ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
սեզօնի բացման առիթով
Պ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ
առաջին բեմ-էլի համար
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ
ԱՒԱԶԱԿՆԵՐ
Ողբերգութիւն 5 արար. և 8 պատկերով, Շիլլերի, թարգմ. Փ. Վարդանեանի։
Սկիզբն է երեկոյեան ժամը ճիշտ 8-ին
Տեղերի գները անցեալ տարվանն են։
Բացված է աբօնեմենտ 10 ներկայացման 20 % զիջումով։
Վարչութեան հերթապահ անդամ՝ Ց. Ղօրղանեան
Ռէժիսեօր՝ Յ. ԱԲԷԼԵԱՆ
3—3

Կիրակի, հոկտեմբերի 1-ին, առաւօտեան ժամը 10-ին
ԿԸ ԿԱՅԱՆԱՅ
Թիֆլիսի Առևտրական Նաւթարդիւնաբերական Ընկերութեան
բաժնետէրերի յուլիսի 30-ին կայացած արտակարգ ընդհանուր ժողովի շարունակութիւնը։ Ի նկատի առնելով քննվելիք հարցերի կարևորութիւնը, խնդրում են պ.պ. բաժնետէրերին անպայման շնորհ բերել։ առ. (Հ. Կ.) 2—2

ԿԱՆԱՆՑ ԿԼԻՆԻԿԱՅԻ
պրօֆ. Սնեգիրեվի նախկին օրդինատօր
ԲԺԻՇԿ
Դ. Ն. ԱԹԱԲԷԳԵԱՆ
Ընդունում է կանացի և մանկաբարձական հիւանդութիւն ունեցողներին Մօսկվայում։ Խորհրդակցութիւնը պրօֆեսօրների մասնակցութեամբ։ Հասցէն՝ Тверская, Козицкій пер., д. Бахрушина, кв. 230.
առ. 4—10

Լուսանկարիչ-ռետուշօր
ԼԵՒՈՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԸ
մեծացնում է ամէն չափի մեծադիր նկարներ։ Ընդունում է նեգատիվի, պօզիտիվի, պօրտրետնի ռետուշ, տիպ և պրօեկտներ։
Նոյնպէս տալիս է լուսանկարչական դասեր։ Հասցէն՝ Գանօվսկայա փողոց, տ. № 7։
(Կ. Հ.) առ. 1—3

ԲԺԻՇԿ
Մ. ՄՈՎՍԻՍԵԱՆ
Ներքին ու երեխայոց հիւանդութիւնների Ընդունում է առաւ. 9—11 ժ. երեկ. 5—7 ժ., Ելիզավետինսկայա փողոց տուն № 21.
առ. (ա. օ.) 2—10

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
և
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ
Ընտանիքներում
Ա. Մ. ԵԶԵԿԵԱՆ
Հասցէն բանակցութեան համար՝ Ул. Петра Великаго (бывш. Лабораторная) № 21։
առ. 19—20

Ա. ՄԵԼԻՔ-ԱՂԱՀՎԵՐԴԵԱՆ
ԲՆԱԳԻՏԱԿԱՆ և ՄԱԹԵՄԱՏԻՔԱԿԱՆ
առարկաների դասեր։
առ. Межевая, 2. 11—20

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակական հոսանքները. Վերջին տեղեկութիւններ. Իրաւաբանների եզրակացութիւնը. Օրագիր Յովնանեան դպրոցի. Ժամանակն է փոխվել, բարքերը միևնոյնն են. Բողոքներ Յովնանեան դպրոցի դէպքի առիթով. Այսօրվայ ժողովները. Վարդաշէնի գիւղացիների գործը. Տեղեկութիւններ գաւառից. Կառավարչական փաստեր և լուրեր. Բարձրագոյն դպրոցներում. Բագուի արձագանքները. Նամակ Երևանից. Նամակ Ղզլարից. Բաց նամակ «Նոր խօսքին». Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ

I

Մի շարք ազդեցութիւններ գրկախառնել են միմեանց և առաջ բերել մեր երկրի կեանքում զանազան տեսակ երևոյթների մի անտառ։

Եթէ վերցնենք միայն հայկական կեանքը, մենք կը տեսնենք այնտեղ մի քանի խոշոր հոսանքներ իրանց տեղական ճիւղաւորութիւններով։ Նրանց կողքին գործում են մեր հարևան ազգերի մէջ գոյութիւն ստացած հասարակական հոսանքները։ Վրացի և թուրք ազգերի մէջ երևան եկած հասարակական հոսանքները մի որոշ չափով շօշափում են մեր կեանքը։ Եթէ աւելացնենք դրանց վրա այն ազդեցութիւնները, որ գործում են մի կողմից մեր երկրի հին վարչական սիստեմը, իսկ միւս կողմից ազատագրական շարժումը իր չափազանց փոփոխվող արտայայտութիւններով, այն ժամանակ հասկանալի կը դառնայ թէ ինչու մեր երկրի կեանքի ասպարէզում հանդէս են եկել բազմատեսակ, յաճախ մէկը միւսին հակասող և բացասող երևոյթներ։

Մենք ամեն օր գործ ու հաշիւ ունենք այդ երևոյթների հետ և չենք կարող ոչ մի կերպ անտես առնել նրանց։

Եւ մեր հասարակական դժբաղդութիւններից մէկը հէնց այն է, որ շատերը չեն կարողացել որոշ դիրք բռնել նրանց վերաբերութեամբ։

II

Ամենակարևոր պայմանները, որոնք կարող են նպաստել պարզելու ազդեցութիւնների բնաւորութիւնը և երևոյթների արժէքը, երկուսն են՝ քննութեան ազատութիւնը և անկեղծութիւնը։

Դժբաղդաբար մեր ներկայ իրականութեան մէջ դեռ չենք տեսնում ոչ այդ ազատութիւնը և ոչ անկեղծութիւնը։ Եւ ընդհակառակը, մենք ամեն օր ականատես ենք այն բանին, որ մարդիկ պապանձեցնում են բողոքող բերանները և ճնշում են քննադատական ձգտումները։

Մենք հաւատում ենք հրապարակական քննադատութեան բեղմնաւոր արդիւնքներին և լաւ գիտենք, որ կեանքի մէջ շատ անպատեհութիւններ զարգացում են ստանում հէնց այն պատճառով, որ ժողովրդական գիտակցութիւնը թոյլ է և բռնադատված խաւար կամ չարամիտ ազդեցութիւններից։

Ուսումնասիրել մեր իրականութեան վրա ազդող գաղափարները և հասարակական հոսանքները, հաշիւ տալ այն երևոյթների մասին, որոնք հանդէս են եկել մեր կեանքում, դա ամենաէական գործերից մէկն է, որ պէտք է կատարէ մեր մտաւոր սերունդը։

Լոյս սփռել այն գործօնների վրա, որոնք ազդում են կեանքի մէջ և պարզել իրականութեան փաստերը—ահա ժամանակակից ամենամեծ կենսական պահանջներից մէկը։

III

Տեսէք թէ ինչ խառնիփնթորութիւն է տիրում մարդկանց վերաբերմունքի մէջ դէպի մեր ընթացիկ կեանքի երևոյթները։ Հասարակական շահը զանազան կերպ է հասկացվում։ Այն, ինչ որ մէկի կարծիքով բարիք է, հրատարակվում է չարիք միւսի կողմից։ Սեփականութեան գաղափարը, դասակարգային գիտակցութեան հարցը, քաղաքական կեանքի պահանջները, գործադուլների անկօնտրոլ գործադրութիւնը, ազգայնական համախմբումների ծրագիրը և ուրիշ բազմաթիւ խնդիրներ շշմեցրել են ազգաբնակութեան խաւերը և նա չը կարողանալով մարսել այդ ամենը, տարուբերվում է այս կողմից այն կողմ, շատ անգամ ամենախղճալի վիճակի մէջ ընկնելով։

Որքան շուտ սկսէ գործել ազատ և առողջ քննադատութիւնը, այնքան աւելի վաղ կազատվենք այն ճահճային դրութիւնից, որ ստեղծվել է կեանքի մէջ և կաշկանդում է հասարակական զարգացումը։

Պէտք է նպաստել հասարակական հոսանքների պարզվելուն կարելին չափ շուտով։ Այլապէս մենք չենք ազատվի թիւրիմացութիւններից և նրանց հետ կապված դժբաղդ հետևանքներից։

Որքան կարելի է շատ լոյս հասարակական գործերի վրա։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշուց հաղորդում են «Кавказъ» լրագրին, որ այնտեղ, սեպտեմբերի 21-ին, Գանձակի ժամանակաւոր գեն.-նահանգապետի կարգադրութեամբ խուզարկութիւններ են կատարվել քաղաքի հայ եկեղեցիներում—Ագուլեաց և Մեղրեցոց։ Առաջինի բեմի վրաերեան են հանված 29 հատ պատրաստ ռումբեր, 2 բերդան հրացան՝ 150 փամփուշտներով և 7 դաշոյն. բացի դրանցից, նոյն եկեղեցում գտնված են հրացանաձգութիւն սովորեցնելու համար զանազան պատկանելիքներ և տաշեղով լի նաւթօտ ջուալներ, որպէս զի կրիտիքական րօպէին այրեն եկեղեցին։ Երկրորդ եկեղեցում գտնված են 17 հատ ռումբերի պատրաստի կեղևներ։

Ի նկատի առնելով կատարված խուզարկութիւնների հետևանքները, գեն.-նահանգապետ Բաուէրի կարգադրութեամբ ձերբակալված են գործին մօտ անձեր. քահանաներ՝ Տէր-Յովհաննիսեանցը, տէր-Արսէն Վարդապետեանը, տէր-Կարապետ Վարդապետեանը. երէցփոխներ՝ Արզումանեանը, Հախվերդեանը, և պահապաններ՝ Միրզաբէգեանը, Ածատուր Վարդապետեանը, Խոչավլեանը և Կաւենեանը։ Քննութիւնը շարունակվում է։

—

Սեպտեմբերի 16-ից գրված մի մասնաւոր նամակ Մեղրուց հետևեալ գոյներով է նկարագրում Զանգեզուրի գաւառի Մեղրու շրջանի՝ Գենուազի ներկայ դրութիւնը.

Թուրք-հայկական դրութիւնը դեռ շարունակվում է միալ լարված։ Օրդուբաթից մեծ դժուարութիւններով հազիւ միայն կարողանում ենք ստանալ պօստը, այն էլ միայն հասարակ նամակներ և լրագիրներ։ Չը նայելով զօրքերի գալուն, այնուամենայնիւ թուրքերը իրանց թշնամական գործողութիւնները չեն դադարեցնում։

Երկու օր սրանից առաջ քշել տարել են Մեղրի գիւղի տաւարը։ Գիւղից մի խումբ երիտասարդներ հետապնդելով՝ հասել են թուրք հօրդաներին Ալանգեազի սարի վրա։ Այս րօպէիս կռիւը շարունակվում է։ Հրացանաձգութեան ձայները այստեղ լսվում են։ Տեսնենք՝ աջողվում է յետ խլել տաւարը։ Թուրքերը պատրաստութիւններ են տեսնում Լիչկ գիւղի վրա յարձակվելու։

Հանդ և Քիւրդլերեանդ գիւղերը նորից են ենթարկվել թուրք ամբոխի յարձակումներին, սակայն աջողութեամբ յետ են մղել։

Այս և սրա նման մանր երևոյթները ցոյց են տալիս, որ թուրք հօրդաները իրանց ուժերը փոխադրում են մեր գաւառը, և նշանները գուժում են, որ կոտորածեր ընդհարումները արդէն բռնկվում են Գենուազի մասում նոր թափով։

Պաշտպանութիւնը հայ գիւղերում սաստկացրած է։ Իսկ մենք գիշերները չենք քնում և արթուն հսկում ենք փորձութեանը դիմաւորելու։

Ի դէպ, օգուտ ենք քաղում առիթից ուղղելու «Մշակի» № 208-ի մէջ տպագրված Ագուլիսից մի անցորդի գրած նամակի քաղուածքը Մեղրու մասին, որտեղ ասված է թէ՝ «Մեղրեցիները կռւում ոչ ոք չէ վնասվել»։ Մեղրեցիները կռիւ մինչև այժմ չեն ունեցել, բացի այսօրվայ տեղեկութեան մէջ յիշվածից. հետևապէս պ. անցորդը չը պէտք է շտապէր գրի անցնել չը ստուգված լուրերը և թիւրիմացութեան տեղիք տար։

—

Հելսինգֆօրս, 29 սեպտեմբերի

Սահմանադիր-ռամկավար կուսակցութեան համագումարը երեկոյեան ժամը ինն և կէսին փակված յայտարարվեց։

(Հեռ. Գործ.)

—

Գօրիսից (Զանգեզուր) հեռագրում են.

«Քարահունջեցիք կատարեցին նիւթական պահանջները, յանձնեցին ունեցած հրացանները։ Սպանողների տեղ Բաուէրը պահանջում է տալ դրվիշներին։ Էկզեկուցիան շարունակվում է, մինչև դրվիշներին յանձնելը, որոնց չենք ճանաչում. բոլոր պաշարները սպառված են։ Գտնվում ենք ծայրահեղ կրիտիքական դրութեան մէջ. խնդրում ենք օգնել»։

ԻՐԱՒԱԲԱՆՆԵՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Սեպտեմբերի 25/28-ին

Մենք, ներքոյ ստորագրեալ իրաւաբաններս, ժողովվելով Յովնանեան օրիորդաց դպրոցի հոգաբարձու պ. Ալէքսանդր Անանեանի հրաւէրով—քննելու յիշեալ դպրոցին վերաբերեալ մեր առաջարկած հարցերը, որոնք ծագել են պ. Լ. Սարգսեանին տեսուչ ընտրելու առիթով, եկանք հետևեալ եզրակացութեան՝ ունենալով իբրև նիւթ մեզ ներկայացրած ներկայ փաստաթղթերը. ա) հանգուցեալ Յով. Ստեփ. Անանեանի 1876 թ-ի ընծայագիրը, բ) Յովնանեան օրիորդաց դպրոցի խորհրդի վերջին արձանագրութիւնները և գ) խորհրդի նորընտիր անդամների և տեսչի հաստատութեան կաթողիկոսական կոնդակները։

Հարց

1) Որո՞նք են այն օրինական հիմունքները, որոնցով պէտք է ղեկավարվի Յովնանեան օրիորդաց դպրոցի վարչութիւնը։

Պատասխան

1) Հանգուցեալ Յովհաննէս Ստեփանեան Յովնանեանի ընծայագիրը, իբրև իրաւաբանական մի ակտ, պարունակում է իր մէջ որոշ ղեկավարող սկզբունքներ, որոնք պարտադիր են ուսումնարանի վարչութեան և հոգևոր իշխանութեան համար։ Այդ սկզբունքները—ներկայ խնդրին վերաբերեալ—հետևեալներն են.

ա) «Ուսումնարանը ընդմիշտ մնալով հոգևոր վարչութեան մէջ, ղեկավարվում է խորհրդով, կազմված տեղական թեմական արքեպիսկոպոսի նախագահութեամբ, Կուսանաց վանքի մայրապետից, Թիֆլիսում ապրող հայերից ընտրված չորս անդամներից, որոնք հաստատվում են Հայոց Պատրիարք Կաթողիկոսից և ուսումնարանի տեսչից։

Խորհուրդը իւրաքանչիւր տարվայ սկզբում պէտք է իր միջից ընտրէ նախագահի օգնական. գործերը պէտք է վճռվին ձայների առաւելութեամբ. անդամներին անձնական իշխանութիւն չէ վերագրվում։

բ) Խորհրդի չորս անդամները Թիֆլիսի բնակիչներից՝ մինչև ես կենդանի եմ, նշանակվում են իմ կողմից, իսկ իմ մահից յետոյ ընտրվում են, երեք տարով՝ պատգամաւորներից, որոնց այդ նպատակով ընտրում են իւրաքանչիւր անգամ թեմական եպիսկոպոսի նախօրօք կարգադրութեամբ Վանքի մայր տաճարի, Մողնու ս. Գէորգ և Աստուածածնի Բեթղեհէմի եկեղեցիների ծխականները, իւրաքանչիւր եկեղեցուց չորս հոգի։

գ) Տեսչին ընտրում է խորհուրդը հայերից, որոնք ստացել են պատշաճ կրթութիւն, և հաստատվում է պաշտօնի մէջ նոյնպէս Վեհափառ Պատրիարքից։ Տեսուչը կառավարում է ուսումնական մասը յիշված խորհրդի անմիջական հսկողութեամբ։

դ) Իմ տոհմի արական ճիւղի մէջ աւագագոյնը օգտվում է ուսումնարանի հոգաբարձուի կոչումով. նա Թիֆլիսում եղած ժամանակ կարող է ներկայ գտնվել խորհրդում ձայնի իրաւունքով։ Հոգաբարձուին յատկացվում է հոգալ ուսումնարանի բարօրութեան մասին»։

Ընծայագրի վերոյիշեալ պայմաններից պարզ երևում է, որ հանգուցեալ ընծայաբերողի և բարձրագոյն հոգևոր իշխանութեան մէջ կայացել է փոխադարձ համաձայնութիւն, որը նուիրաբերութիւնը ընդունելուց յետոյ—պիտի իբրև անխախտելի դաշնագիր սրբութեամբ պահպանվի և կատարվի հոգևոր վարչութեան կողմից։

Հարց

2) Օրինաւո՞ր է եղել նախընթաց խորհրդի կազմը և իրաւասութիւնը՝ սկսած այն ժամանակից, երբ պետական ուսումնարանական վարչութիւնը յանձնեց դպրոցը հոգևոր կառավարութեան, մինչև խորհրդի նորընտիր անդամների պաշտօն ստանձնելը։

Պատասխան

2) Յովնանեան օրիորդաց դպրոցի նախընթաց խորհուրդը ունէր օրինաւոր կազմ և իրաւասութիւն՝ դպրոցական բոլոր գործերը վարելու։ Համաձայն ընծայագրի 2-րդ և 3-րդ յօդուածների, խորհրդի անդամներն են—նախագահութեամբ թեմական առաջնորդի. Կուսանաց վանքի մայրապետը, Յովնանեանների տոհմական ճիւղի ներկայ և աւագագոյն անդամ պ. Ալէքսանդր Անանեանը, դպրոցի տեսուչը և ժողովրդից ընտրված չորս անձինք, ընդամենը 8 հոգի՝ հաւասար իրաւունքներով։ Նախկին խորհրդում մնացել էին 5 անդամներ—մէկի մահվան և միւսի բացակայութեան *) պատճառով, ուստի նրանք լիակատար իրաւունք ունէին՝ համաձայն ընծայագրի—դպրոցական գործերը վարելու և որոշումներ կայացնելու։ Գալով նախընթաց խորհրդի պաշտօնավարութեան ժամանակամիջոցի լրանալուն, մենք գտնում ենք, որ խորհրդի հին կազմը իրաւունք ունէր և նոյն իսկ պարտաւոր էր շարունակել իր գործունէութիւնը մինչև յաջորդ խորհրդի կազմվելը, երբ էլ դա լինէր. այդ սկզբունքը, որ բղխում է օրէնքից և կեանքի պահանջներից, ընդունված է պետական և հասարակական հիմնարկութիւններում։ Անկախ դրանից, մենք գտնում ենք, որ նախընթաց խորհրդի պաշտօնավարութեան ժամանակամիջոցը լրանում էր միայն ներկայ թ-ի սեպտեմբերի 3-ին, որովհետև այդ ամսաթիւին երեք տարի առաջ նրանք իրանց պաշտօնը ստանձնեցին, որ ժամանակվանից և պէտք է համարվի նրանց պաշտօնավարութեան եռամեայ շրջանը։

Հարց

3) Օրինաւո՞ր է խորհրդի նորընտիր չորս անդամների պահանջը, որ արձանագրված է ներկայ սեպտեմբերի 14-ի օրագրում. այն է թէ՝ Կաթողիկոսը հաստատելով նրանց ընտրութիւնը, հաստատել է դրանով այն յանձնարարութիւնները, որ նրանք ստացել են պատգամաւորներից։

Պատասխան

3) Այդ պահանջը զուրկ է որևէ օրինական հիմունքներից, քանի որ ո՛չ պատգամաւորները իրաւունք ունէին յանձնարարութիւններ տալ ընտրեալ անդամներին, որպէս զի նրանք ղեկավարվեն իրանց գործունէութեան ընթացքում այդ յանձնարարութիւններով և ո՛չ էլ անդամները իրաւունք ունէին ընդունել այդ վերջինները ի գործադրութիւն։

Այն օրից, երբ նրանք պաշտօնի են հրաւիրվում, պարտաւոր են ղեկավարվել միայն դպրոցի կանօնադրութեամբ, որից դուրս իրանց հաճոյքով նրանք ոչ մի պահանջներ չեն կարող դնել ի կատարումն։

Բացի դրանից Կաթողիկոսի հաստատման կոնդակից բնաւ չէ երևում, որ Վեհափառ Հայրապետը հաստատելով նոր անդամների ընտրութիւնը, հաստատել է կամ օրինաւոր է ճանաչել և՛ պատգամաւորական յանձնարարութիւնները։ Չենք ասում արդէն, որ ծխական ժողովների արձանագրութիւններում բնաւ չը կայ յիշատակութիւն որևէ յանձնարարութիւնների մասին՝ ընտրող ժողովրդի կողմից։

Հարց

4) Օրինաւո՞ր է խորհրդի նորընտիր չորս անդամների վճիռը, որ արձանագրված է ամսիս 26-ի օրագրում։ Այդ օրագրից երևում է, որ յիշեալ անդամները որոշել են արձակված համարել դպրոցի տեսուչ Լևոն Սարգսեանին հոկտ. 1-ից, նրա տեղ հրաւիրել նոր տեսուչ, և միաժամանակ նախընթաց խորհրդից արձակված ուսուցչական խումբը՝ բացառութեամբ աւագ վարժուհու։

Պատասխան

4) Յովնանեան դպրոցի տեսուչ պ. Լ. Սարգսեանը ընտրվել է դպրոցի նախկին խորհրդի օրինաւոր որոշմամբ և հաստատվել է կաթողիկոսական կոնդակով։ Հրաւիրվելով տեսչական պաշտօնի—նա մասնակցել է նախկին և ներկայ խորհրդի նիստերին և ներկայացրել է խորհրդին ի հաստատութիւն ուսուցչական խմբի կազմը։ Ոչ մի պաշտօնեայ չէ կարող արձակվել իր պաշտօնից առանց օրինական և յարգելի պատճառների, ևս առաւել ներկայ դէպքում, երբ Լևոն Սարգսեանը տակաւին չէ գործակցել նորընտիր հոգաբարձութեան հետ և օրագրի մէջ չեն արձանագրված որևէ պակասաւոր կողմեր նրա անցեալ մանկավարժական գործունէութիւնից։ Հետևապէս խորհրդի նորընտիր անդամները բնաւ իրաւունք չունէին օրինաւոր ընտրված և հաստատված տեսչին, առանց որևէ կանօնաւոր հիմունքի, իր պաշտօնից արձակված համարել և նրա տեղ նորին ընտրել։

Չէ կարելի օրինական հիմք ճանաչել այն պատճառաբանութիւնը, որ բերված է ամսիս 26-ի օրագրում, քանի որ վերջինը բղխում է զուտ անձնական տրամադրութիւնից և լրագրութեան մէջ ծագած փոխադարձ պայքարից, որը ոչ մի առնչութիւն չունի ուսումնարանի հետ։ Ուստի խորհրդի նորընտիր անդամների ներկայ սեպտ. 26-ին կայացրած որոշումը պէտք է համարել ապօրինի։

Հարց

5) Կանօնաւո՞ր է խորհրդի անդամների փոխանորդութիւնը։

Պատասխան

5) Ընդունելով այն ղեկավարող սկզբունքները, որոնք արձանագրված են հանգուցեալ Յովհաննէս Անանեանի ընծայագրի մէջ, և աչքի առաջ ունենալով ներկայ զեկուցման առաջին կէտում յիշված մեր պատճառաբանութիւնները, մենք գտնում ենք փոխանորդութիւնը ընծայագրով չը թոյլատրված։

Եզրափակելով վերոյիշեալը, մենք գտնում ենք, որ պ. Լ. Սարգսեանը ամենայն իրաւամբ պէտք է համարվի տեսուչ դպրոցի՝ իր պաշտօնին յատուկ լիազօրութիւններով, իսկ նրա առաջարկած և խորհրդից հաստատված խումբը պաշտօնի հրաւիրված. իսկ ինչ վերաբերում է նորակազմ խորհրդի սեպտ. 26-ի որոշման, նա պէտք է համարվի անկանօն և ապօրինի։

Նիկողայոս Քալանթարեան, Պետրոս Քալանթարեան, Սամսոն Յարութիւնեան, Արշակ Բարխուդարեան, Պօղոս Դօլուխանեան, Յովհաննէս Սպէնդիարեան, Միքայէլ Աթաբէգեան։

---

*) Այդ ժամանակ դպրոցը տեսուչ չունէր։

ՕՐԱԳԻՐ ՄԱՐԻԱՄԵԱՆ ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

Սեպտեմբերի 26-ին

Լսեցին. Սրբազան նախագահը բանալով ժողովը յայտնեց, թէ՝ «Վեհափառ Կաթողիկոսը հրամայել է ինձ «հրաւիրել միմիայն հոգաբարձուներին ճիշդ եւ վճռել բոլոր վիճելի հարցերը տեսչի եւ ուսուցիչների մասին», և հրաւիրեց հոգաբարձուներին յայտնել իրանց ցանկութիւնները և ասաց. «ապագայ բարդութիւններից ուսումնարանը ազատ պահելու համար անհրաժեշտ է անձնական զրկանքները խոնարհեցնել հասարակական շահերին և թողնել Վեհափառի մինչև այժմ եղած կարգադրութիւնները անփոփոխ, որով մխիթարված կը լինի և Ծերունի Հայրապետը և գոհ կը մնայ հասարակութիւնը և ուսումնարանում այժմէն կը սկսվին դասաւանդութիւնները, որին սպասում են հարիւրաւոր երեխաներ»։

Կարգադրեցին. Պ. Ա. Անանեանը ասաց. «Տեսուչը հաստատվել է Կաթողիկոսից և նա պէտք է մնայ տեսուչ. նոր ընտրութիւն անել ես օրինաւոր չեմ ճանաչի. իսկ ուսուցիչների մասին նոյնպէս նոր կարգադրութիւն ես չեմ ընդունում, որովհետև անցեալ մեր օրինական ժողովում հաստատել ենք ուսուցչական ցուցակը, որ ներկայացրել էր տեսուչը»։

Նախագահը կրկնեց, որ Վեհափառ Կաթողիկոսը թոյլ է տուել տեսչի և ուսուցիչների վերաբերութեամբ վճիռ կայացնել։

Հոգաբարձու Տիգրան Յովհաննիսեանը յայտնեց իր կարծիքը, թէ՝ «Տեսուչն ու նորահաստատ հոգաբարձուները չեն կարող միասին պաշտօնավարել մի հաստատութեան մէջ, որովհետև պ. Սարգսեանը մեզ մինչև այսօր հոգաբարձու ճանաչել չէ կամեցել, մեր իրաւունքներին արհամարհել է և մի շարք հրապարակական վիրաւորանքներ է հասցրել մեզ, և այս այսպէս լինելով հանդերձ, ես ցանկութիւն չունեմ, որ տեսուչը վիրաւորիչ կարգով հեռացվի ուսումնարանից և ոչ էլ զրկվի ռոճիկից այլ ես կառաջարկեմ, որ տեսուչը ինքը հրաժարական ներկայացնի մինչև ամսիս վերջին օրը և ստանայ իր ռոճիկը այնպէս, ինչպէս Վեհափառ Կաթողիկոսն է առաջարկել. իսկ եթէ չը ներկայացնի հրաժարական, հրաժարված ճանաչել»։

Այս առաջարկին միացան տ. Դարիա Թադէոսեանը, պ.պ. Յարութիւն Թայիրեանը և Լիպարիտ Նազարեանը։

Պ. Ալէքսանդր Անանեանը յայտնեց. թէ՝ «Ես չեմ կարող ներկայ լինել այն որոշման, որ քանդում է առաջին որոշումը. ես հեռանում եմ ժողովից»։

Կուսանաց անապատի Մայրապետը համակերպվեց Անանեանցի կարծիքին և նա նոյնպէս հեռացաւ ժողովից։

Ժողովը շարունակելով նորընտիր հոգաբարձուները, յարմար համարեցին տեսչի պաշտօնի համար հրաւիրել պ. Յակոբ Մանանդեանին. իսկ ուսուցչական կազմի մասին որոշեցին հրաւիրել նախկին խումբը մի տարի ժամանակով, բացի տեսչուհուց. իսկ դասերն սկսել հոկտեմբերի 2-ից, երկուշաբթի օրից։

Նախագահը յայտնեց թէ՝ «Ես, իբրև ստորադրեալ Վեհափառ Կաթողիկոսի, պարտաւոր էի համարում ինձ մինչև այժմ գործերին ընթացք տալ Վեհափառ Կաթողիկոսի ցուցումներով, և այս պատճառով իրաւունք չէի համարում Հայրապետից հաստատված տեսչի մասին խնդիր դնել. բայց այժմ Նորին Վեհափառութիւնը հեռագրական պատուէր է կարգադրել ինձ միմիայն հոգաբարձուներից ժողով կազմել և վճռել հարցերի, այն է՝ տեսչի և ուսուցչական խմբի մասին վճիռներ դնել. ես այդ յանձնեցի հոգաբարձական ժողովի հայեցողութեան։ Գալով իմ կարծիքին, ես գտնում եմ նախկին հոգաբարձուների որոշումներն ըստ ամենայնի օրինական և հետևապէս ոչ մի օրինական հիմք չեմ գտնում հոգաբարձական նախկին կազմի որոշումները փոփոխութեան ենթարկել, ուստի և չեմ կարող իմ հաւանութիւնը տալ նոր տեսուչ հրաւիրելու և նախկին ուսուցչական խումբը պաշտօնի հրաւիրելու որոշման։ Իսկ ինչ վերաբերում է ներկայ հոգաբարձուների պատճառաբանութիւններին, թէ նրանք ուսումնարանից դուրս միմեանց հրապարակական վիրաւորանքներ են պատճառել, որը ծառայում է տեսչին արձակելու շարժառիթ, այդ ես չեմ համարում ուսումնարանական գործին միացնելու ոչ մի օրինական հիմք, որովհետև այդ մասին կայ օրէնք, ուր զրկված համարվածները դիմում և արդարութիւն պահանջելով պատժի են ենթարկում յանցաւորներին»։

Հոգաբարձուները յայտնեցին, թէ իրանք տեսչին ոչ մի վիրաւորանք չեն պատճառել։ Վիրաւորանք պատճառողը տեսուչն է եղել։

Իսկ հոգաբարձութիւնը անհրաժեշտ համարեց սոյն որոշման հարազատ պատճէնը տեսչի հաստատութեան յայտարարութեան հետ մատուցանել Վեհափառ Կաթողիկոսին։

ԺԱՄԱՆԱԿՆ Է ՓՈԽՎԵԼ, ԲԱՐՔԵՐԸ ՄԻԵՒՆՈՅՆՆ ԵՆ

Ուղիղ տասներկու տարի առաջ էր. նոյն հայոց Հայրիկն էր կաթողիկոս և նոյն Լ. Սարգսեանը տեսուչ. տարբերութիւնը միայն նրա մէջն էր, որ նկարագրելիքս դէպքը տեղի ունեցաւ ոչ թէ Թիֆլիսում, այլ Շուշում, և այժմեան դիւանապետ Ն. վ. Մելիք-Թանգեանը ոչ թէ Էջմիածնում, այլ Լ. Սարգսեանի խմբում ուսուցիչ էր։

Մի արտասովոր պայքար էր սկսվել Էջմիածնի՝ յանձին Ղարաբաղի ամենազօր առաջնորդի, Կարապետ եպիսկոպոս Այվազեանի, և թեմական դպրանոցի ուսուցչական խմբի մէջ։ Պայքարը մեր հոգևոր իշխանութեան համար մի շատ սովորական բանի՝ արդարութիւնն ու ճշմարտութիւնը ոտնակոխ անելու նպատակով էր։

Ղարաբաղի թեմի վրա «Կայսեր հրամանով» նշանակված Այվազեան եպիսկոպոսը, որ եկեղեցու բեմից ժողովրդին, այն հեզ, ոչխար քրիստոնեաներին, պոլիցիական կառավարութեան ժանդարմներով էր սարսափեցնում, անզօր էր գտնվում իր բացարձակ սուվերենիտետը դպրոցական գործերի վրա հաստատելու մէջ. դպրոցը գտնվում էր ամենածաղկած վիճակի մէջ շնորհիւ պարտաճանաչ և իր կոչման համապատասխան տեսչի ու ուսուցչական խմբի։

Սակայն ամենազօր առաջնորդը վճռել էր չը կանգնել ոչ մի դժուարութեան առաջ, ոչ մի միջոցի մէջ խտրութիւն չը դնել, միայն թէ արձակել իրան համար աչքի փուշ դարձած ուսուցչական խումբը տեսչի հետ։ Փաստերը, որոնց հիման վրա պէտք է պատճառաբանէր իր այդ վճիռը, պակասում էին, բայց հօ կային, Աստուծոյ փառք, տերտերներ, զանազան մութ անձնաւորութիւններ, վերջապէս կար Էջմիածինը Հայոց Հայրիկով: Եւ ճիշտ տարվայ այս ժամանակ սկսված պայքարը վերջացաւ նրանով, որ Էջմիածինը ապացուցեց կրկին ու կրկին անգամ արդարութեան ու ճշմարտութեան բացակայութիւնը. 1904 թ. նոյմ. 15-ին մի տեսուչ, տասներեք ուսուցիչներ Թողեցին Շուշու Թեմական դպրոցը, միայն նրա համար, որ դպրոցը դրել էին իրան վայել բարձրութեան վրա. 600 աշակերտների կրթութիւնը յանձնվեց փողոցից ու եկեղեցիներից ժողոված զանազան տիրացուների և քահանաների՝ միմիայն նրա համար, որպէսզի Այվազեան եպիսկոպոսի զօրութիւնը (իմա կամայականութիւնը) ճանաչվի ի վերայ երկրի և ի յերկինս:

Ճիշտ 12 տարի յետոյ, միևնոյն ամսին միևնոյն դէպքն է տեղի ունենում Թիֆլիսում՝ միևնոյն անձնաւորութեան հետ. Այս անգամ չը կայ Այվազեան եպիսկոպոս, այլ կան մի քանի հոգաբարձուներ. Ներսէս վ. Մելիք-Թանգեանը ոչ Թէ դիւանապետ էր, այլ ուսուցիչ Նիկողայոս Մելիք-Թանգեանն էր, բոլոր աշակերտներից ու ուսուցիչներից սիրված, ուսուցչական խմբին միացած՝ Այվազեանի ոտնձգութիւնների դէմ բողոքողներից մէկը: Իսկ Լ. Սարգսեանը նոր է կոչվել պաշտօնի. Յովնանեան դպրոցում նրա կատարելիք գործունէութեան մասին ոչ ոք ոչինչ չը գիտէ:

Եւ միայն մի քանի օր առաջ, երբ այդ հոգաբարձուները մի խումբ պատգամաւորների բերանով անողոք կռիւ էին յայտարարել Էջմիածնի հոգևոր բիւրօկրատիայի դէմ, նրան տալով «շահագործող», «արդարութիւնը ոտնահարող» մականունները, այսօր այդ նոյն պատասխանատու, գումաւոր-բիւրօկրատ հոգաբարձուները դիմում են նոյն հոգևոր վարչութեան օգնութեան, երբ հարկաւոր է իրանց կամայականութիւնը ապահովել:

Բնորոշ է չէ՞, ընթերցող:

Այո, ժամանակներն են փոխվել, իսկ մեր բարքերը միևնոյնն են մնացել, Թերևս աւելի վատացել:

Տ. Տ.-Գրիգորեան

ԲՈՂՈՔՆԵՐ

Մ.-Յովնանեան դպրոցի դէպքի առիթով

Անշուշտ ընթերցող դասակարգը տեղական, և նոյնիսկ գաւառներում, ուշի ուշով հետաքրքրվում է մի շարք հրատապ հարցերով, որոնք պտտվում են Թիֆլիսի Յովնանեան դպրոցի շուրջը: Ծնողները և դպրոցի սաները, որ սրտատրոփ սպասում էին սեպտեմբերի սկզբներին դպրոցի բացման՝ ընտրված և Կաթողիկոսի կոնդակով հաստատված պ. Լ. Սարգսեանի տեսչութեամբ, դժբաղդաբար ականատես են մի շարք անարգարութիւնների, որի շնորհիւ էլ, հոկտեմբերը, որ քթի տակ է, դպրոցը ոչ Թէ բացված չէ, նոյնիսկ դրականապէս պարզ չէ՝ դեռ Երբ կը բացվի:

Եւ ինչո՞ւ. պատասխանը շատ պարզ է. շնորհիւ կուսակցութեան մի քանի կամակորների կամ աւելի ճիշտն ասած կոյրը հասարակ, որոնք անձնական վրէժխնդրութիւնից դրդված ոչ մի միջոց չեն խնայում վաղուց ընտրված, հաստատված և ամենաարժանաւոր տեսչին տապալելու և ըստ այնմ տնօրինելու դպրոցի վիճակը կուսակցութեան նեղ հոգով: Բազմաթիւ անձինք, նոյնիսկ գաւառներում, որոնք ոչ մի կապ չունեն Յովնանեան դպրոցի խնդրի հետ, հետևապէս չեն շահագրգռված այս կամ այն տեսչի ընտրութեամբ, ամենայն հետաքրքրութեամբ սպասում էին, որ վերջապէս Էջմիածինը վերջ կը տայ այդ խայտառակ կռուին, հարկադրելով անմիջապէս սկսելու ուսումը այդ դպրոցում պ. Լ. Սարգսեանի տեսչութեամբ, իբրև օրինաւոր հաստատվածի և արժանաւորի. բայց աւաղ. հայերիս մէջ Երբ է մի բարենպատակ ձեռնարկութիւն առանց խոչընդոտների շարունակվել, Երբ է հայը օգտվել խոհեմ ուղով այն իրաւունքներից, որ տրվել են նրան: Եւ ահա Էջմիածինը հազիւ հազ աւետեց կուսակցութեան Թելադրած հեռագիրը վերին ատեանի տարօրինակ բովանդակութեամբ՝ «Տալ Լ. Սարգսեանին մի տարվայ արձակուրդ և առաջարկել Թողնել տեսչութեան պաշտօնը և այլն»:

Էջմիածնի հաստատուն կամարիլլան ամեն տեղ և ամեն ինչ փողի մէջ է գտնում. կարճ և պարզ կարգադրութիւն. տալ փող և առաջարկել հեռանալ: Բայց ինչու. յանուն ո՞ր ճշմարտութեան, և վերջապէս ի՞նչ արատ է գտնված պ. Լ. Սարգսեանի գործունէութեան մէջ:

Բայց Երբ է բիւրօկրատիան իր գործերի համար հաշիւ տուել. եԹէ բարեհաճէ էլ տալու, երևի Կրիլովի գայլի և գառի բացատրութիւնը դուրս կը գայ:

Ենթադրենք, որ պ. Լ. Սարգսեանը բաւականացաւ նիւթականով և հեռացաւ ասպարէզից. մի՞թէ այդ դէպքում հասարակութիւնը գոհ կը լինի. ոչ. երբեք: Հասարակութիւնը միայն արդարութիւն է որոնում և հաւատացած է, որ ոչ մի ազնիւ անձն բարոյականը նիւթականին չի փոխարինի:

Մենք, որ շարունակ մամուլի էջերից ընդհանրապէս և կողմնակի անձանց կողմից մասնաւորապէս տեղեկանում էինք բիւրօկրատ դաշնակցականների բռնի գործողութիւնների մասին, չէինք երազում, որ այդ ինքնակոչ պարոնները համարձակութիւն կունենան Էջմիածնի վեհարանն ու խուցերն էլ իրանց գործունէութեան ասպարէզ դարձնել. փաստը ահաւասիկ առաջներս է:

Ժամանակ է հայ հասարակութեան ասելու. «Բաւական է, պ. պ. դաշնակցականներ, որքան աջ ու ձախ ցիրկուլյարներ ու հրամաններ արձակեցիք, օգտվելով մեր անտարբերութիւնից. Թողէք գոնէ դպրոցը, եկեղեցին ու նոյն իսկ սիրահար զոյգերը ազատ լինեն ձեր բռնի ոյժից և քմայքոտ սպառնալիքներից. իսկ մի քանի իբր «սօցիալիստ» հայր-սուրբերը Թող չը մոռանան, որ բացի հասարակական պատասխանատուութիւնից կայ նաև խղճի ծանր պատասխանատուութիւն. Ժամանակ է վերջ տալու այն զզուելի դերին, որ նրանք էին ստանձնել. բաւականացէք, «սօցիալիստ» վեղարաւորներ, նրանով, ինչ մինչ այսօր էք կատարել, օգտվելով վաւաճխալ Վեհափառի բարեհաշտութիւնից և դուրս տալով այնպիսի մանիֆէստներ, որոնց կուսակցութեան տղերքն են հաւանել:

Բողոքելով այն անարդար կարգադրութեան դէմ, որ վերջին անգամ Էջմիածնի կամարիլլան տուեց, շտապում ենք յայտնել մեր բուռն համակրանքը պ. Լ. Սարգսեանին իբրև արժանաւոր տեսչի: Յուսով ենք, որ հասարակութիւնը չի զլանայ ձայն տալու յանուն արդարութեան, յանուն դպրոցի սրբազան շահերի:

Ի դիմաց մի խումբ ծնողների և երիտասարդների՝ Փ. Տէր-Ստեփանեան

Թիֆլիս, 25 սեպտեմբերի

—

Մենք, քաղաքացիներս, վրդովված այն ամենով, որ կատարվում է Յովնանեան օրիորդաց դպրոցում, նկատելով, որ շնորհիւ հոգաբարձութեան մի քանի անդամների, դպրոցը դարձել է անվերջ ծաղրի և անյատակ յաւակնութիւնների ասպարէզ, որով մի կուսակցութիւն ուզում է իշխող-տիրապետող դառնալ այդ դպրոցին և, որ գլխաւորն է, դպրոցը դարձել է կուսակցական մի կրկէ, յայտնում ենք մեր անձայր զզուանքը, զայրոյթը և բողոքում ենք այդ ամօթալի վարմունքի դէմ՝ համոզված լինելով, որ դպրոցը չունի կուսակցութիւն, չունի դասակարգ, չունի ոչինչ բացի մի բարձր և վսեմ գաղափարից՝ կրթել, դաստիարակել մանուկներին:

Այս բոլորից յետոյ, մենք, քաղաքացիներս, ամեն միջոցի դիմելու ենք վերջ տալու այդ անվերջ խնդիրներին. և այսօր բարձրացնելով մեր մարդկային իրաւունքների արդար և զօրեղ ձայնը՝ պահանջում ենք. 1) անյապաղ հրաւիրել նախկին հոգաբարձութիւնից ընտրված և օրինական ճանապարհով հաստատված տեսուչ Լևոն Սարգսեանին մտնել իր իրաւունքների շրջանը և վերսկսել դպրոցի ընդհատված դասատուութիւնը, որովհետև մանուկը պարտաւոր չէ զրկվելու իր մտաւոր կերակրից անտակտ և անխիղճ հակառակորդութիւնների պատճառով. 2) եԹէ հոգաբարձութեան յիշեալ անդամները կը շարունակեն իրանց ոտնձգութիւնները, ոտնակոխ անելով հասարակական իրաւունքը, ձայնը, անմիջապէս հրաւիրել միջնորդ դատարան ընդունված եղանակով, որ վերջնականապէս կարող կը լինի լուծել այդ հանգոյցը, անխտիր վէճը:

56 քաղաքացիներ

Պ. Սարգիս Խարազեանը խնդրում է մեզ յայտնել, որ նա ևս միանում է «Մշակի» երէկվայ համարում տպված կոչին Յովն. դպրոցի առիթով:

ԱՅՍՕՐՎԱՅ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Այսօր նշանակված են Թիֆլիսի Հայոց Դրամատիքական ընկերութեան և Թիֆլիսի Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովները:

Հայ հասարակութիւնը վերջին տարիները մեծ անտարբերութիւն ցոյց տուեց դէպի այդ երկու կարևոր հաստատութիւնները: Դրամատիքական ընկերութիւնը, որ կոչված է պահելու մայրենի բեմը, նպաստելու նրա զարգացման և բարգաւաճման—իսկ մայրենի բեմը մի հզօր գործօն է մայրենի գրականութեան զարգացման համար և հզօր կրթական ազդեցութիւն ունի ժողովրդի վրա—այսօր ունի միայն մի երկու տասնեակ անդամներ: ԵԹէ չը լինէին կողմնակի, բարերար անձանց նպաստները, որոնք սակայն երկար շարունակվել չեն կարող, գուցէ մենք այժմ հնարաւորութիւն չունենայինք վաղվանից ունենալ հայկական կանոնաւոր ներկայացումներ:

Առանց հասարակութեան և մանաւանդ հայ ինտելլիգենցիայի բարոյական և նիւթական աջակցութեան, Դրամատիքական ընկերութիւնը անկարող է արդիւնաւէտ գործ կատարել: Եւ պէտք չը կայ ամենևին առանձին ջանքեր անել. բաւական է, որ հասարակութիւնը յաճախէ հայ Թատրոնը, բաւական է, որ հայոց միակ Թատրոնը ամեն երեկոյ լիքը լինի, բաւական է, որ հայ հասարակութիւնը, բուրժուազիան, որ այնքան սիրով յաճախում է կաֆէշանտանային վայրերը, շաբաթ մի օր էլ յաճախէ մայրենի Թատրոնը, շաբաթ մի անգամ էլ մի, երկու րուբլի նուիրէ հայ Թատրոնին: ԵԹէ Դրամատիքական ընկերութիւնը կարողանայ իր սովորական ծախքերը ծածկել ներկայացումներից ստացած գումարներով, այն ժամանակ նա հնարաւորութիւն կունենայ արտակարգ նպաստները (Մանթաշեանի 5000 ր. և Աֆրիկեանի 1000 ր.) յատկացնել բեմի բարգաւաճման, որ հնարաւոր է միայն տաղանդաւոր ոյժերի մասնակցութեամբ և ի մի համախմբմամբ. այն ժամանակ ընկերութիւնը հնարաւորութիւն կունենայ բոլոր փոքր ի շատէ աչքի ընկնող դերասաններին և դերասանուհիներին ու յոյսեր ներշնչող սկսնակներին հրաւիրել և կազմակերպել լայն հիմունքների վրա մայրենի բեմը ոչ միայն Թիֆլիսում, այլ և ուրիշ քաղաքներում: Իսկ այսօր նա ստիպված է—լոկ միջոցների սղութեան պատճառով—զրկվել այնպիսի ոյժերից, ինչպէս տաղանդաւոր տիկին Սիրանոյշը. այսօր նա ստիպված էր Թոյլ տալ, որ ոյժերը կիսվեն, դերասանական խումբը բաժանվի երկու մասի, մինը Թիֆլիսում՝ Աբելեանի և միւսը Նոր-Նախիջևանում՝ Պետրոսեանի ղեկավարութեամբ:

Սակայն ընկերութիւնը ինչ որ կարողացել է և հնարաւոր է, արել է, որ ներկայ Թատրոնական սեզոնում հայկական ներկայացումները կանոնաւորապէս ընթանան շաբաթը 3 անգամ, մինը՝ Արտիստական ընկերութեան Թատրոնում, միւսը՝ Թիֆլիսի կլուբում և երրորդը՝ Հավլաբարի Թատրոնում: Հրաւիրված է Մօսկվայից նոր դերասանուհի օր. Հերթեան. մի քանի երիտասարդ ոյժերի, օրինակ Մ. Մանուէլեանին հնարաւորութիւն է տրված փորձելու իր դերասանական ընդունակութիւնը: Ճիշտ է, հին խմբից մի քանի անձինք չեն մտել այժմեան խմբի մէջ, բայց դրա պատճառը այն է, որ խումբը բաժանվել է երկու մասի և մի մասը գնացել է Նոր-Նախիջևան, իսկ մի քանի անձինք ևս չեն մտել՝ պարզապէս միջոցների սղութեան պատճառով: Ցանկալի էր, ի հարկէ, որ տիկ. Մելիքեան, իբրև փորձված դերասանուհի, Վրոյր, Միրաքեան նոյնպէս հրաւիրվէին անցեալ տարվայ նման, բայց, կրկնում ենք, դա կախված է աջակցութիւնից, որ հասարակութիւնը ցոյց կը տայ ընկերութեան, յաճախելով ներկայացումները և միևնոյն ժամանակ անդամ գրվելով ընկերութեան, բազմացնելով անդամների Թիւը, նոր կենդանութիւն և եռանդ ներշնչելով ընկերութեան:

—

Բարեգործական ընկերութեան մասին քիչ բան ունենք ասելու: Մի այնպիսի ժամանակ, երբ ամենից շատ զգացվում էր հայ տառապեալ ժողովրդի համար այդպիսի մի հաստատութեան պէտքը, նա կատարեալ անգործունէութեան էր մատնված և ամենևին իր կոչման բարձրութեան վրա չը մնաց կանգնած: Այդ ընկերութեան մէջ ևս նոր կեանք, Թարմ եռանդ պէտք է մտցնել: Ինչպէս լսեցինք, ընկերութեան գլխաւոր ղեկավար պ. Տ. Յովհաննիսեան հրաժարական է տուել: Պէտք է վերակազմել խորհուրդը և նոր ոյժեր կանչել գործելու:

Հ. Ա.

ՎԱՐԴԱՇԷՆԻ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ԳՈՐԾԸ

(Նամակ խմբագրութեան)

Որովհետև «Մշակի» № 211-ի «Ներքին լուրերի» բաժնում Նուխուց հաղորդած լուրը բոլորովին աղաւաղված ու սխալ է, ուստի խոնարհաբար խնդրում եմ զետեղել իմ այս նամակը, Թիւրիմացութիւնը վերացնելու համար, որից առանց այն էլ Վարդաշէնի ուտէացի հայերը շարունակաբար տուժել են և տուժում են: Մի այդպիսի լուր 1903 Թ. հաղորդած էր «Нов. Обозр.» Թերթում, չեմ յիշում որ համարում, որը ես հերքեցի իր ժամանակ: Նոյն սխալը կրկնվում է և այսօր ձեր լրագրում: Դէպքը կայանում է հետևեալում: Յայտնի է, որ հին ժամանակներից Նիժ և Վարդաշէն ուտէախօս գիւղերում ապրում են լուսաւորչական ուտէացի հայեր և դարերի ընթացքում այդ երկու գիւղերի չորս բոլորն ընկած բազմաթիւ գիւղեր բռնութեամբ ընդունել են իսլամը, օր. Բում, Վանդամ, Խաչմազ, Օրորան, Զագգեթ, Ղուլթաշէն և այլն: Վերոյիշեալ երկու գիւղն էր, որ միայն կարողացաւ պահել հաւատն ու ազգութիւնը մինչև ռուսաց տիրապետութիւնը: Վարդաշէնը սակայն ընկաւ ռուսաց միսիոնների ճիրանը և ուժով ժողովրդի մի մասը դարձրին յունադաւան: Իր ժամանակ, այդ առիթով Ցարութին-բէգ Սիլիկեանը գնաց մինչև Պետերբուրգ՝ Կայսրի մօտ, Ներսէս կաթողիկոսի խորհրդով, որն այն ժամանակ դեռ Թիֆլիսի առաջնորդն էր: Ցար.-բէգ Սիլիկեանի ջանքերը պսակվեցին միայն նրանով, որ, ով որ մկրտվել էր յունական ծէսով, նա իրաւունք չը ստացաւ վերադառնալ մայրենի եկեղեցու գիրկը, իսկ մնացածները իրաւունք ստացան: Այդպիսով մօտ 70 ծուխ մնացին յունադաւան և այնուհետև մինչև այսօր կրօնական պայքարը մերթ բուռն, մերթ խաղաղ մղվում է իրար մէջ:

Կուսլանձորը գիւղից ներքև, մի վերստի վրա գտնվող, Եղիշէ Առաքեալի ուխտատեղին է, որ Զատկի երրորդ օրը միշտ մեծ տօնախմբութիւն է լինում: Վերջապէս այդ պայքարը այն աստիճանին հասաւ, որ Կովկասի կառավարչապետ Դոնդուկովը եկաւ Վարդաշէն և տեղն ու տեղը քննելով այդ վէճը, հաստատեց, որ վանքը հայերին է պատկանում: Դրանից յետոյ մինչև 1900 Թ. ոչինչ չէր պատահում. բայց երբ տեղացի Միխայիլ Զէյրանովը, աւարտելով Գանձակի արհեստագիտական դպրոցը, դարձաւ քահանայ, սկսեց նորից մեքենայութիւններ լարել և աշխատեց տիրանալ վանքի եկամուտին: Գոլիցինի ռէժիմը նրան Թև էր տալիս, ուստի 1900 Թ. հրամայեց իր երէցփոխին մոմ վաճառել այդ վանքում: Տեղացի հայ քահանայ Թադէոս Տէր-Աբրահամեանը կարողացաւ դրա առաջն առնել: Զէյրանով քահանան, վրացիների մօտ Զէյրանաշվիլի, վճռեց վրէժ լուծել այդ քահանայից, որովհետև իր ձեռնարկութիւնները յօդս էին ցնդում Թադէոս քահանայի պատճառով: Սկսեց հայ աղջիկներ ամուսնացնել յունադաւանների հետ: Թադէոս քահանան, այդպիսիներին փախցնել տալով գիշերները, ամուսնացնում էր հայ երիտասարդների հետ: Զէյրանաշվիլին կատաղած դիմեց «դանօսների», և Թադէոս քահանային սկսեցին չարչարել քննութիւններով, բայց վնասել դարձեալ չը կարողացաւ: Եկաւ 1901 Թ. Զատիկ: Զէյրանովը ուղարկեց դարձեալ իր երէցփոխին վանքը: Այս անգամ ծեծվեց Թադէոս քահանան, որովհետև նրանք պատրաստված էին եկել, իսկ հայերը տեղեկութիւն չունէին: Թադէոս քահանան դիմեց դատի, բայց դատաւորների առաջ իրան ծեծողներին նա ներեց, խօսք առնելով, որ այլ ևս չեն մտնի յիշեալ վանքը: 1902 Թ. ուրիշ ընթացք ստացաւ: Եկաւ Նուխու գաւառապետ Բարթմևլօվը և ստրաժնիկների շղթայով տիրացաւ վանքի հիւսիսային մատուռին, որով և փառաւորվեց Զէյրանաշվիլին: 1903 Թ. պայթեց փոթորիկը: Հայերը տեսնում էին՝ ինչպէս արդարութիւնը ոտի տակն են տալիս և չեն լսում իրանց բողոքները, ուստի այս անգամ, հէնց որ Զէյրանով քահանան երևում է մատուռի մօտ, գրոհ են տալիս և ծեծելով հալածում վանքից:

Ահա այդ ժամանակ նա դիմում է աճիդական միջոցի և հայերին սկսում է մեղադրել սրբապղծութեան մէջ, չնայած որ նրա խաչն ու աւետարանը Թաշկինակում կապած՝ պրիստաւի ձեռքով յանձնում են նրա ժամհարին: Իսկ Թէ երբ է կոտրվել խաչը և պատռվել աւետարանը, կարծեմ հասկանալի պիտի լինի, երբ մի մարդ ուզում է ինչ ձևով էլ որ լինի վնասել իր հակառակորդին: Զէյրանովը սկըսում է գործել հեռագրով և ապա այդ կոտրած խաչով ու պատռված աւետարանով գալիս է «սրբազան» Գոլիցինի մօտ, որի հետևանքը լինում է այն, որ ադմինիստրատիւ կերպով աքսորվում են մայիսին՝ Թադէոս քահ. Տէր-Աբրահամեանը, Ա. Եսիբեկեանը և Ե. Մնացականեանը և սկսվում է քրէական դատ ու քննութիւն: Մեղադրվում են 21 հոգի: Հազիւ այս տարի վերջանում է քննութիւնը և նշանակվում է դատը Նուխում: Մեղադրվում են 210 և 211 յօդ., որոնք սպառնում են տաժանակիր աշխատանք ու մշտական աքսոր: Այժմ մեղադրվողներից մի քանիսը մեռել են, օր. Թադէոս քահանան, Տէր-Կարապետեան, Գրիգորեան և Զախմախչեան: Գիւղացիք ահագին նեղութիւններով վարձել են 1600 ր. Տ. Յովհաննիսեանին, իսկ սա էլ պէտք է վարձէր լաւ փաստաբաններ: Այժմ պ. Յովհաննիսեանը իր խմբով գտնվում է Նուխում: Դատը սկսվել է սոյն ամսի 28-ին: Տեսնենք գիւղացիների հաւատը արդարացնելու է պ. Տ. Յովհաննիսեանը Թէ ոչ. այդ ցոյց կը տայ ապագան:

Աբգար Տէր-Աբրահամեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Սարաթլու (Նուխու գաւառ), 19 սեպտեմբերի.

Նախորդ նամակումս յիշել էի, որ գերված Յովհաննէս Ղազարեանցը և Բուդաղ Զօլուշեան Շահմիրեանցը արդէն ազատվել եկել են: Աւելորդ չեմ համարում բերել նրանց պատմուածքը:

Օգոստոսի 31-ին, երեկոյեան, երբ մենք նստած էինք Բաշիրի ջրաղացում, յանկարծ ջրաղացի բակը Թափվեցին 5 զինված ձիաւոր Թուրքեր և 8 Թուրքի միջից ջոկելով մեզ՝ հայերիս, իսկ մօտ 200 գլուխ Թուրքի տաւարի միջից ջոկելով մեր 3 ջուխտ գոմէշները, քշեցին տարան դէպի Բաշ-Լայսխու Թուրք գիւղը: Մեզ պիտի տանէին Ղըլաղ-Գիօյնիք գիւղի մօտով. ճանապարհին մեր լացն ու կոծը, աղաչանքն ու պաղատանքը, որ մենք աղքատ և երեխաների տէր մարդիկ ենք, ոչ մի դրական արդիւնք չը տուին. մենք միայն յոյս էինք տածում, որ մեր «գարդաշ ղօնաղները» գուցէ պատահեն և ազատեն մեզ. բայց աւա՜ղ, մեր յոյսերը չարդարացան. Ղըլաղ-Գիօյնիքի մօտ մեզ երկու տեղ պատահեցին Թուրքեր, 15—20 մարդ միասին, շատերը մեզ ծանօթ, մեր արտերը հնձողները, մեր «ղօնաղները», մինչև այսօր էլ մեր հացը ուտողները, բայց սրանք միայն ժպտալով աւազակների երեսին, ասում էին՝ «բարի բազար լինի» և անցնում. Մեր հարցին Թէ՝ ինչու այս Թուրքերի գոմէշները չեն վերցնում, իսկ մերը վերցնում են, աւազակները պատասխանեցին կարճ և հասկանալի. «որովհետև նրանք մուսուլմաններ են, իսկ դուք հայ»: Մեր սիրեցեալ «ղօնաղների» վարմունքը ծանր տպաւորութիւն Թողեց մեզ վրա:

Վերջապէս մտանք Բաշ-Լայսխու գիւղը. փախչելու հնարաւորութիւն չը կար. մտածում էինք հաւար գցել գիւղում, բայց վստահ չէինք ժողովրդի վրա: Մեզ կանգնեցրին մի դռան մօտ. դուրս ծեծեցին, դուրս եկաւ տանտէրը ճախնչում փաթաթված. ստուեցաւ մեզ, դիտեց և ասաց. «բա... սրանք իմ ասած մարդիկը չեն. բայց էլի վնաս չունի, սոխը երկու անուն չունի, հայը հայ է. բարի բազար լինի»: Երկու ժամ պահելուց յետոյ, աւազակները այստեղից շոր և ուտելիքն վերցնելով, մեզ քշեցին տարան գիւղի վերևի սարը և այնտեղ անտառում, մի խոր ձորակում, մօտ 200 քայլ գիւղից հեռու մեզ պահեցին և չորս հոգով պահապան դրին մեզ վրա նոյն գիւղից (ոչ աւազակներից), որոնց մէջ մենք լաւ ճանաչեցինք Զումա Սկանդար-օղլուին, որը շարունակ մեր գիւղը գնացող-եկող մարդ է: Վերջինս մեր գերութեան ամբողջ ժամանակամիջոցում աւազակների և մեզ համար կերակուր էր բերում ուրիշների հետ միասին: Միւս օրը Զումա Սկանդար-օղլին գիւղից եկաւ և յայտնեց, որ պրիստաւը գալիս է գիւղը, ուստի պէտք է գերիներին անտառի խորքը տանել. և աւազակները մեզ կէս վերստ ևս հեռացրին մեզ. բայց յետոյ եկաւ մի ուրիշ մարդ նոյն գիւղից՝ Մհամմադ անունով և յայտնեց, որ պրիստաւը արդէն գնացել է, և մեզ բերին նոյն տեղը, գիւղի դիմաց: Աւազակներից մէկը մի ամիս է, ինչ որ մօտակայ գիւղից եկել միացել է աւազակային խմբին իր կամքով. մեր հարցին Թէ՝ ինչն է ստիպել նրան աւազակ դառնալու, նա գըրպանից հանեց մի Թղթի կտոր և մէջը ցոյց տալով 400 րուբլի Թղթադրամ, ասաց. «Տեսնում ես, այս 400 րուբլին ես մի ամսվայ ընթացքում եմ աշխատել, այժմ ռուսաց կառավարութիւն չը կայ, ոչ էլ օրէնք կայ. զօրքերի մէկ մասը եաբօնացիների կռւում կոտորվեց, մէկ մասն էլ մենք կոտորեցինք Սալումչայի կռւում, երբ նրանք ցանկանում էին աւազակներիս բռնել. էլ ինչու չօգտվել դէպքից և փող չաշխատել»:

Երեք օր պահելուց յետոյ՝ մեզ չորրորդ օրը արձակեցին. երբ գիւղից հաղորդեցին, որ արդէն մեր փրկանքի փողը ստացվել է, աւազակները իրանց լրտեսներով և [illegible] մեզ տարան քշեցին գիւղի միջով: Ամբողջ հասարակութիւնը՝ մարդ, կին, աղջիկ, երեխայ բոլորը դուրս էին եկել մեզ Թամաշա անելու. աւազակների երեսին նայում էին և մէկ մէկու մէջ փսփսալով ծիծաղում: Մենք մեր աչքերին չէինք ուզում հաւատալ. երէկվայ մեր դանները լիզողները, մեր արտերը հնձողները այսօր յաղԹական ժպիտը երեսներին քիչ էր մնում ովսաննա կանչէին իրանց հերոսներին: Բաշ-Լայսխուից մեզ տարան Բաշ Գիօյնիք, որտեղ սպասում էին մերոնք. դեռ գիւղը չը մտած, մի լրտես եկաւ աւազակներին յայտնեց, որ պրիստաւը 20 զինուորներով գալիս է գիւղը. աւազակները իսկոյն Թողեցին մեզ և հեռացան: Մենք մտանք գիւղը, որտեղ գտանք մերոնց: Վերջիններս մեր փրկանքի փողը տուել էին աւազակապետ Սահադին իր բարեկամների և ժողովրդի ներկայութեամբ: Ինչպէս այստեղ իմացանք, ամեն մէկը մեզ վրա ախորժակ էր բաց արել հարստանալու, որի համար մեզ աճուրդով (торгъ) էն ցանկացել ծախելու, ինչպէս անասունների. բաշ-գիօյնիքցի չօփուռ-Մհամմադ Իբրահիմ-խըզըշի-օղլին առաջարկել է աւազակներին մեզ համար 350 րուբ., իսկ Թազաքենդ գիւղի բնակիչ Հաջի-Աբդուլլան մեր գինը բարձրացրել էր մինչև 1100 րուբ.: Միմիայն շնորհիւ միւս աւելի բարեխիղճ աւազակապետ Ջաւադ-օղլու միջամտութեան՝ մեզ վերադարձնում են անմիջապէս հայերին և փրկանքի գումարը իջեցնում են մինչև 320 րուբլու:

Այնուհետև երբ գերվածները գնում են տուն, ճանապարհին պատահում է այն ընդհարումը Թուրք ամբոխի հետ, որի մասին գրած եմ իմ նախորդ նամակում:

Ս. Մուսայելեանց

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՒ ԼՈՒՐԵՐ

—Մօտ ժամանակներս մայրաքաղաքի կառավարչական շրջաններում նոր փոփոխութիւններ են լինելու: Պետերբուրգի ներկայ քաղաքապետ գեներալ Ֆօն-դեր-Լաունիցը նշանակվելու է ժանդարմների շեֆ. գեն. Դէդիւլինի փոխարէն, որը պալատական կոմենդանտ է այժմ, իսկ Պետերբուրգի քաղաքապետ կը նշանակվի Մօսկվայի նախկին քաղաքապետ Վոլկովը, որը ներկայումս հարաւային գաւառներից մէկում նահանգապետ է:

—Մայրաքաղաքի հեռախօս բիւրօն հաղորդում է, որ ներքին քաղաքականութեան ուղղութեան հարցը կառավարչական շրջաններում մեծ իրարանցումն և սաստիկ վիճաբանութիւն է առաջ բերել: Ռեպրեսսիաների անպէտքութիւնը բոլորի համար ակնյայտ է արդէն, բայց և բարենորոգումներ մտցնել ներկայումս մեծամասնութիւնը համարում է բաւականին վտանգաւոր մի գործ: Այդ պատճառով երկիրը խաղաղացնելու համար հարկաւոր է, որևէ կոմպրոմիսսներ անելով, դուրս գալ ներկայ ծանր կացութիւնից: Շատերը, իբրև միակ միջոց, համարում են Պետական Դումայի շուտափոյթ գումարումը: Լուրերին նայելով, այդ բոլոր հարցերը վերջնական լուծումն կը ստանան ղեկավարող շրջանների առաջիկայ նիստերից մէկում:

—«Рѣчь» լրագիրը լսել է, որ մինիստրների խորհրդի սեպտեմբերի 24-ին կայացած նիստում վճռված է առաջարկել պետական բոլոր աստիճանաւորներին, որոնք չեն համակրում կառավարութեան ծրագիրը, Թողնել ծառայութիւնը:

—Լուր է պտտում, որ գեներալ Գրոդեկովի փոխարէն Հեռաւոր-Արևելքի զօրքերի հրամանատար է նշանակվում գեներալ Սէլիվանովը:

(«Рѣчь»)

—«Страна» լրագիրը լսել է, որ Հելսինգֆորս են ուղարկվել ոստիկանական մի քանի գործակալներ՝ հսկելու ժողովրդական ազատութեան կուսակցութեան ներկայացուցիչների վրա:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Աւագների խորհուրդը որոշել է սեպտեմբերի 24-ին նշանակել աւագների ընտրութիւնը: Ժողովրդական ազատութեան կուսակցութեան ուսանողական խմբակը մօտ օրերս դիմել է՝ խնդրելով յետաձգել ընտրութիւնների օրը մինչև նոյեմբեր ամսի 1-ը, որովհետև սեպտեմբերի 24-ին կայանալու է սահմանադիր-ռամկավար կուսակցութեան ընդհանուր կայսերական համագումարը, և ուսանողների մի մասը զբաղված լինելով նրանով, հնարաւորութիւն չի ունենայ բաւարար գործունեայ մասնակցութիւն ունենալ համալսարանի նախընտրողական պայքարին: Այնուամենայնիւ աւագների խորհուրդը վճռում է չը յետաձգել ընտրութիւնները, բայց որովհետև այդ որոշումը ընդունվել էր միայն մի ձայնի առաւելութեամբ, այդ պատճառով հարցը յանձնվում է համալսարանական ընդհանուր ժողովին լուծելու: Ժողովը կայանում է սեպտեմբերի 20-ին: Սահմանադիր-ռամկավար կուսակցութեան յարուցած խնդիրը դրվում է առաջին հերԹում: Բացի կադէտներից, խօսում են աւագների խորհրդի ներկայացուցիչները և երկու ուրիշ ճառախօսներ: Դրանք բոլորն էլ մատնանշում են, որ ուսանողութեան պրոֆեսսիօնալ կարիքները պահանջում են շտապեցնել նոր աւագների ընտրութիւնը, որովհետև հին կազմը 5000 հոգու ներկայացուցչութիւն է, մինչդեռ այժմ ընդհանուր ուսանողութեան Թիւը համալսարանում 9000-ի է հասնում: Չափազանց շատ գործ կայ, և այն էլ կարևոր գործ (օրինակ ստիպենդիաների հարցը), որին ներկայ աւագների խորհրդի ոյժերը միանգամայն անկարող են բաւարարութիւն տալ: Մանաւանդ որ անցած տարվայ ընտրված 23 աւագներից այժմ մնում է միայն 17 հոգի:

Ժողովը որոշում է աւագների ընտրութիւնը չը յետաձգել:

Վերջում քննվում է աւագների խորհրդի կանոնադրութեան հարցը:

Արդէն սկսվել է զօրեղ ագիտացիա աւագների խորհրդի ընտրութեան համար: Ցրւում էին, տարածում ու կախում հազարաւոր տպագրված սօց.-յեղ. և աշխատաւոր խըմբակի բլօկի, Լիտվայի սօցիալ-դեմօկրատների և ուրիշ կուսակցութիւնների Թեկնածուների ցուցակները:

Դրա առիԹով «Рѣчь» լրագրում ուսանողութեան ժողովրդական ազատութեան և ձախակողմեան սահմանադիր ֆրակցիաների նախընտրողական միացեալ բիւրօն հետևեալ նամակն էր ուղղել Պետերբուրգի համալսարանի ուսանողներին.

«Ընկերներ. սեպտեմբերի 24-ին սկսվելու են աւագների խորհրդի նոր կազմի ընտրութիւնները: Անցեալ տարին ապացուցեց այդ մարմնի մեծ նշանակութիւնը, իսկ բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչների արտայայտած ու ամբողջ ուսանողական ժողովի բուռն հաւանութեանը արժանացած լաւ կարծիքները խորհրդի գործունէութեան առիԹով ցոյց են տալիս, որ ուսանողութեան լայն խաւերում նա մեծ հեղինակութիւն ու վստահութիւն է վայելում: Խորհրդի ընտրութիւնների համար ընդունված յարաբերական սիստեմը ապահովում է փոքրամասնութեան ներկայացուցչութիւնը, և այդպիսի պայմաններում ակնյայտ է դառնում, որ իւրաքանչիւր ուսանողի իրաւունքը մասնակցել ընտրութիւններին՝ միևնոյն ժամանակ բարոյական պարտականութիւն է դնում նպաստելու աւելի լիակատար ներկայացուցչութեան համար: Այնուամենայնիւ անցեալ տարվայ ընտրութիւնները ցոյց տուեցին, դժբաղդաբար, որ այդ պարտականութիւնը գիտակցում են ոչ բոլոր ուսանողները: Այն ժամանակ, երբ ծայրահեղ ձախակողմեան խմբակները համարեա լիակազմ մասնակցեցին ընտրութիւններին և ճնշող մեծամասնութեամբ գրաւեցին տեղերի ահագին մասը, ձախակողմեան սահմանադիր ֆրակցիային բաժին ընկաւ 22 տեղից միայն երկուսը: Չէ կարելի կասկածել, որ համալսարանի ուսանողութեան սօցիալիստ կուսակցութիւններին պատկանող մեծամասնութեան մէջ ռամկավար-սահմանադիրների Թիւը չը հասնի 10 %-ի անգամ. այդ պատճառով նախընտրական բիւրօն յիշեցնում է ընկերներին, որ մի այդպիսի ինդիֆերենտիզմ համուսանողական հարցերում ուղղակի աններելի է: Համալսարանական աւագների ընտրութեան օրը իւրաքանչիւր ուսանողի տեղը, որ փնտռում է իր ուսանողական շահերը, պէտք է լինի համալսարանի շինութիւնը և քուէատուփերի շուրջը»:

—Պետերբուրգի համալսարանի աւագների խորհուրդը առաջիկայ ընտրութիւնների պատճառով դիմել էր համալսարանի դիւանատանը՝ խնդրելով ստոյգ տեղեկութիւններ տալ համալսարանի ուսանողների մասին: Դիւանատան տուած տեղեկութիւնները հետևեալն են. Բոլոր ուսանողների, ազատ ունկնդիրների և ունկնդրուհիների Թիւը համալսարանում հասնում է 8,764 հոգու, որոնցից իրաւաբանական ֆակուլտետում կան 4,209 հոգի, բնական մասում՝ 2,128, մաթեմատիկական՝ 1,426, լեզուագիտականում՝ 680 և արևելեանում՝ 321: Աւագներ պէտք է ընտրել՝ իւրաքանչիւր 250 ուսանողին մէկ աւագ. այդ հիման վրա կընտրվէին աւագներ 36 հոգի:

—Առաջիկայ աւագների խորհրդի ընտրութիւնների առիԹով ճեմարականների համալսարանական միութեան կօմիտէն մի կոչ է հրատարակել, որով հրաւիրում է իր համախոհներին չը մասնակցել ընտրութիւններին, որովհետև ընտրութիւնները, ինչպէս այդ ցոյց տուեց անցեալ տարվայ փորձը, անկասկած գերակշռութիւն կը տան ձախակողմեան կուսակցութիւններին, որոնք համալսարանը դարձնում են զէնք քաղաքական կռուի համար:

—Աւագների խորհրդի կողմից սեպտեմբերի 23-ին նշանակված ուսանողական ժողովը չը կայացաւ, որովհետև մամուլի մէջ աւագների խորհրդի կանոնադրութեան նախագիծը,(?) որը մտադրութիւն կար ժողովում քննութեան ենթարկել:

—Տեխնօլօգիական ինստիտուտում կազմված է մի մասնաժողով քննելու պրոֆեսսոր Տաւիլդարովի գործը: Այդ գործի էութիւնը հետևեալն է: Տաւիլդարովը անցեալ տարի նոյեմբերին, երբ գնդակահարութեան էր ենթարկվում ինստիտուտը և հեռախօսները չէին բանում, չէր Թոյլատրել օգտվել իր հեռախօսով հարկաւոր դիմումներ անելու համար:

ԲԱԳՈՒԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

«Страна» լրագրում տպագրված է հետևեալը. «Բագւում մի մարդ սպառնական նամակ է ստանում, որով փող էին պահանջում իրանից: Նամակը տպագրված էր պօստային Թղթի վրա գեղեցիկ կերպով: Նամակի հեղինակը, պահանջելով փող, խնդրում է այդ փողը յանձնել իրան Բագւի լրագրներից որ և է մէկի խմբագրատան միջոցով: Նամակի վրա նկարված է սովորական խաչը և ստորագրված է «Черный воронъ»: Նամակատէրը ներկայացնում է այդ նամակը գեներալ-նահանգապետին, իսկ վերջինս այդ նամակը ոստիկանապետի միջոցով ուղարկում է անգործների խորհրդին, առաջարկելով որ եԹէ երեք օրվայ ընԹացքում ցոյց չը տրվի նամակի հեղինակը, այն ժամանակ խորհրդի բոլոր անդամները անյապաղ կաքսորվեն քաղաքից:

«Բաւական էր մի հայեացք միայն ձգել նամակի վրա համոզվելու համար, որ ուղղակի պրօվօկացիա էր: «Եւ այդ պրովոկացիան սիրողների գործ չէ, այլ պրօֆեսիոնալ-կազմակերպվածների,—պատասխանեց անգործների խորհուրդը. —Նամակի հեղինակը կապեր ունի բոլոր խմբագրութիւնների հետ, ասացէք, ինչական տէռրօրիստներից կարող էր յոյս գնել բոլոր խմբագրութիւնների վրա, որպէս զի խնդրէ յանձնել փողը որևէ խմբագրութեան միջոցով: Բացի դրանից անգործները միԹէ փող ունեն, որ այդպիսի մաքուր տպագրական մեքենայ էլ ունենան,—մելամաղձոտ կերպով նկատում է խորհուրդը»:—Մենք համաձայն ենք,—շարունակում են անգործները,—որ փող կորզելը անպէտք, անարդար մի գործ է, սակայն մենք գաղտնի ոստիկանութիւն չունենք. մենք զբաղված ենք բոլորովին ուրիշ գործերով, ինչպէս այդ յայտնի է ամենքին: Այդ պատճառով անկարող լինելով ինքներս որ և է բան անել յանցաւորին գտնելու համար, մենք անկեղծ կերպով աջողութիւն ենք մաղԹում օրինական քննութեանը այդ ուղղութեամբ»:

Այդ քաղուածքներից յետոյ «Страна»-ի խմբագրութիւնը աւելացնում է.

«Հետաքրքրական է Թէ Բագուի գեներալ-նահանգապետը, նշանակած երեք օրը լրանալուց յետոյ, ինչ միջոցների կը դիմէ»:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Սեպտեմբերի 26-ին

Այսօր՝ կէսօրին, քաղաքի սեպհական հողի վրա՝ Անգլիական այգու արևելեան կողմում քաղաքային սեպհական տան շինութեան հիմքը դրվեց: Ռուս, հայ և Թուրք հոգևորականութիւնը հիմնադրութեան օրհնութիւնները կարգ կատարեցին, և քաղաքագլուխը՝ պղնձէ փոքրիկ տախտակն, որի վրա փորագրված է հիմնադրութեան ժամանակը (սեպտ. 26-ը 1906 Թ. հիմը դրվեց քաղաքային տան) որն առանձնապէս օրհնեց ռուս հոգևորականութիւնը, իր ձեռքով դրեց հիմքի փոսի մէջ:

Ապա ներկայ եղողները հրաւիրվեցին խաճաշիկի. երբ քաղաքագլուխը բարձրացրել բաժակը ցանկացաւ, որ հայերն ու Թուրքերը իսկապէս հասկանան հայ-Թուրքական ընդհարումների տխուր հետևանքները, գաժան մոռանան տխուր անցեալը յօգուտ քաղաքի բարգաւաճման, ներկայ եղող նահանգապետ պ. Կօվալեօվը անկեղծ պատասխանելով «ամեն» դատարկից բաժակը: Ի դէպ է յիշել, իսկապէս գովասանքի արժանի է պ. Կովալեօվը դէպի հայ-Թուրքական ընդհարումները բռնած իր անաչառ դիրքի համար:

Տիգրան Գայեանեան օր. դպրոցի հոգաբարձութիւնը մեծ ճգնաժամի մէջ է, անցեալ տարվանից 700 րուբլի դեֆիցիտ է. սակայն այս տարի մի դասարան էլ աւելացրել է: Ճշմարիտ է, նա փակել է նախակրթարանը նոր բացված չորրորդ դասարանի փոխարէն, սակայն վերջինիս ուսուցիչների դասագինը լինելով աւելի բարձր քան փակված ա. նախակրթարանի ուսուցիչներինը, ուստի 700 րուբլի պարտքի վրա այս տարի կաւելանայ մի 700 րուբլի ևս և մի քանի աւելի: Հոգաբարձութիւնը յոյս ունի Թէ պարտքը և թէ յաջորդ տարիներում լինելիք ծախսերը ծածկել ոչ միայն իր և քաղաքի միւս եկեղեցիների ծխականների՝ այլ և թեմի վրա տուրք դնելով (?)... Չէ՞ որ դպրոցում սովորում են և միւս եկեղեցիների ծխականների և թեմից եկած աշկերտներ...

Սակայն դժբաղդութիւնն այն է, որ ինքը՝ հոգաբարձութիւնն էլ համոզված չէ, որ աջող ելք կունենայ տուրք նշանակելով, ուստի և ամսիս 24-ին հրաւիրել էր ծխականներին հնար մտածելու՝ անցեալ և այս տարվայ դեֆիցիտները ծածկելու համար, իսկ բացասական դէպքում սպառնում էր հրաժարական տալ, փակել նոր բացած դասարանը, արձակել նոր հրաւիրած ուսուցիչներին, եթէ միայն սրանք չեն համաձայնվի յանձն առնելու ձրի պարապելու, որովհետև իրանք՝ հոգաբարձութեան անդամները հրաշագործներ չեն...

Եւ մէկը չը գտնվեց ծխականներից, որ հարցնէ հոգաբարձութեան. «Տեսնում էիր, որ անցեալ տարվանից դեֆիցիտ ունէիր, ինչո՞ւ էիր նոր դասարան բաց անում և այդպիսի տարակուսութեան մէջ ընկնում. ինչո՞ւ նախահաշուի համեմատ դասարաններ չէիր պահում»...:

Ժողովը սակաւամարդ լինելով՝ յետաձգվեց հոկտեմբերի 1-ին:

Քաղաքիս միւս եկեղեցիների դպրոցների դրամական դրութիւնն էլ շատ աննախանձելի է. ուսուցիչներն ստանում են չնչին ռոճիկներ և այն էլ ոչ ժամանակին. կան և ձրի պարապողներ էլ: Հարկաւոր է դպրոցների համար հաստատուն աղբիւրներ գտնել, որոնք լինեն մշտնջենական. պատահական դրամական գումարները պէտք է երկրորդական համարել: Հարկաւոր է նկատի ունենալ, որ խեղճ ուսուցիչն իր կուրծքն է փչացնում դպրոցում, իսկ դրա փոխարէն հարկաւոր է նրան վարձատրել թէ նիւթապէս և թէ բարոյապէս:

Ու—չ.

ՆԱՄԱԿ ՂԶԼԱՐԻՑ

Սեպտեմբերի 24 ին

Հայ-Թուրքական ընդհարումների ընթացքը ցոյց է տալիս, որ յաճախ ընդհարումները ծագել են զուտ անհատական, մասնաւոր վէճերից ու կռիւներից: Եւ սա շատ պարզ է, քանի որ ազգերի կրքերը գրգռված ու լարված են. հակառակ ազգի մէջ նկատվող իւրաքանչիւր փոքրիկ սովորական դէպքն անգամ գունաւորվում, ծաւալվում և ըստ երևոյթին սկիզբ է դառնում ընդհարումների:

Այս այսպէս լինելով, այնտեղ, ուր հայ-թուրք և առհասարակ հակառակ ազգեր մի տեղ են խմբվում կամ շարունակ յարաբերութեան մէջ են, պէտք է աշխատեն զգոյշ լինել և տեղիք չը տալ որևէ կասկածի կամ թշնամանքի: Մեծ զգուշութիւն է հարկաւոր մանաւանդ բանւորներին, որովհետև նրանք խառն օտար ազգերի հետ՝ յաճախ բանում են նաւթահանքերում, այգիներում և այլն: Չէ՞ որ բանւորները ամեն տեղ իրանց դասակարգային շահի տեսակէտից պէտք է նայեն և իրար վերաբերմամբ աւելի դասակարգային դեր կատարելով՝ նպաստեն ընդհանուր միութեան, դասակարգային գիտակցութեան:

Ցաւօք սրտի պէտք է ասել, որ, յաճախակի են նկատվում ընկեր բանւորների մէջ կռիւներ, վէճեր, որոնք վերջանում են սպանութիւններով և երբեմն էլ ծաւալվելով՝ մասսայական թշնամանքի ու ատելութեան են փոխվում: Այդպիսի անզգուշութիւններից բանւորների միութիւնը վնասվում է և երբեմն էլ ազգերի անտագօնիզմ է առաջ գալիս իր ցաւալի հետևանքներով:

Այդպիսի ցաւալի դէպք տեղի ունեցաւ կիրակի օրը Ղզլարում: Ղզլարցիք գլխաւորապէս այգեգործութեամբ են պարապում. այժմ այգեկութ է և շրջակայ գիւղից 10,000-ից մինչև 15,000 բանւորներ են հաւաքվել բանելու: Բանւորները գլխաւորապէս կօզակներ են, նողայներ, լեզգիներ. կան և թուրքեր, հայեր, ռուսներ և այլն: Վէճերն անսպառ են:

Երկու հայեր (երևանցի բանւորներ) հարբած՝ վէճի են բռնվում մի նողայի հետ. վէճը սուր կերպարանք է ստանում. հայերից մէկը ֆիննական դանակով մահացու վէրքեր է հասցնում նողային, որը քիչ յետոյ մեռնում է: Երևակայեցէք այն շփոթն ու գրգռումը, որ առաջ պիտի գար հրապարակում հաւաքված տարբեր ազգերի հազարաւոր բանւորների մէջ: Սպանողներից մէկին բռնում են, իսկ միւսը փախել է. սպանողին պօլիցիան հազիւ ազատեց կատաղած ամբոխի ձեռքից:

Եւ յաճախ այսպիսի անզգուշութիւններից է, որ առաջ են գալիս մեծ-մեծ կռիւներ, ցաւալի ընդհարումներ. և ինչո՞ւ են այս բոլորը, ընկեր բանւորներ... Որքա՜ն ցաւալի է:

Վ. Սապանդարեան

Յ. Գ.—Ղզլարը աբրեկների (աւազակների) յարձակման երկիւղի մէջ է. ամեն օր գողութիւններ ու թալաններ են լինում. գերված Ղամբարեանից ոչ մի լուր չը կայ. ինչպէս ասում են, Դաղստանի խորքերն են տարել, թաքցրել:

Վ. Ս.

ԲԱՑ ՆԱՄԱԿ «ՆՈՐ ԽՕՍՔ»-ԻՆ

(Նամակ խմբագրութեան)

Սեպտեմբերի 12-ին

Խնդրեմ այս յօդուածին տեղ տաք «Մշակի» էջերում, որպէս զի կարողացած լինեմ պատասխանել «Նոր Խօսքի» № 5-ում զետեղված յօդուածին: Ամբողջ պատասխանատուութիւնը վերցնում եմ ինձ վրա:

«Նոր խօսքի» խմբագրութիւնը, որը բաղկացած է մեծ մասամբ երէկվայ՝ հնչակեանութիւնից սօցիալ-դեմօկրատիայի անցած անհատներից, որոնցից շատերը տարիների ընթացքում համարվել են Հնչ. կուսակցութեան ղեկավարներ, չէ իմանում թէ «ովքեր են հնչակեանները»:

Քանի որ այդ պարոնների ձեռքումն էր Հնչ. կուսակցութեան ղեկը, նրանք այդ կուսակցութիւնը երկինք էին բարձրացնում, իսկ երբ նրանք դուրս քշվեցին, այնուհետև Հնչ. կուսակցութիւնը «մի զարմանալի յամառութեամբ և հետևողականութեամբ սկսեց փախչել արևի լոյսից, մնաց փակված իր մութ նկուղներում»: Եթէ նրանք ոչ մի բանի հետ ծանօթ չեն եղել և այնուամենայնիւ ղեկավարել են Հնչ. կուսակցութիւնը, այն ժամանակ թող թոյլ տրվի ինձ ասելու բացարձակօրէն, որ նրանք շահագործել են կուսակցութիւնը:

Հնչակեանները «նկուղներում են նստած», բայց պիտի ասեմ, որ այդ այն նկուղներն են, որտեղ ս.-դեմօկրատիայի լիդէրները գործադուլների, ապստամբութեան և հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Թիֆլիսում, սրբատեղի էին շինել, ուր Ն. Ժ.-նին հետեւում էր Ս-րը, սրան Շ—մեանը, Կիրակոսը, Պետրոսը և դուք, պարոնայք: Հնչակեանները լայն հասարակութեան համար մնում են խորհրդաւոր անծանօթներ, որովհետև Թիֆլիսի առաջին և երկրորդ կարգի վաճառականների համար, ս.-դեմօկրատների նման պահանջներ չեն մշակում ու ներկայացնում խոշոր կապիտալիստ-տանուտէրերին:

Այո, պարոնայք, մենք ունենք յանձնախմբեր, վարչութիւններ, մասնաճիւղեր, որոնց անդամները մի տարվայ ընթացքում, Թիֆլիսում թէ գաւառներում, կարողացան վերականգնեցնել և հասցնել նախկին փառքին ու բարձրութեան՝ ձեր ձեռքով քանդված գործը, և որոնց անդամները լինելու պատիւն ունէին երէկ ձեզանից շատերը: Ունենք և զինուորներ, որոնք յամենայն դէպս ձեր կուսակցութեանը պատկանող անդամների նման «черн. группа»-ներ չեն կազմակերպում ու սրանից-նրանից մահվան սպառնալիքի տակ դրամ չեն կորզում:

Փաստեր, որչափ կուզէք: Եթէ Հնչակեանների կատարած մի երկու տերրօրները ձեր աչքին մեծ նշանակութիւն են ստացել, հապա մոռանում էք, որ ձեր լիդէրներից մի քանիսը խանութներն ընկած, առանց որոշված գումարն են գանձում և մերժողներին էլ բօյկօտով և այլ միջոցներով վախեցնում, մինչև որ ստանում են: Արդ, ինչ տարբերութիւն կայ մեր և ձեր մէջ, գոնէ հանգանակութեան խնդրում:

Արդեօք «քծնում էինք», երբ դուք չը կարողանալով հրատարակել ձեր «պզտիկ Կայծը», եկել աղաչում, դրամ էիք խնդրում, որպէս զի կարողանայիք ձեր թերթի գոյութիւնը պահպանել, և պէտք է յիշեցնեմ, որ այդ գումարը մինչև օրս էլ մնում է ձեզ մօտ: Եթէ «քծնում էինք», հապա ինչպէ՞ս դուք «նկուղներում նստածների» թեկնածութիւնը գրեցիք Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակ:

Բերած փաստերից պարզ երևում են, թէ ո՛վ, ո՛ւմ առաջն է քծնել, և փոխանակ մեր ասելուն, դուք էք ասում:

Իսկ երբ դուք ասում էք թէ՝ «ինչի՞ համար է այդ բոլորը, ինչ է այդ մարդկանց նպատակը, նրանց միսիան, գործունէութիւնը» և կամ ինչումն է կայանում մեր «սօցիալ-դեմօկրատիզմը», որոնց մասին իբր թէ դուք գաղափար չունէք, այն ժամանակ թոյլ տուէք ձեր երեսին ասելու, որ դուք, երէկվայ հնչակեաններդ, անամօթ կերպով ստում էք:

Մի բան սակայն լաւ իմացէք, որ մենք ձեզ նման ապուշներ չենք, որ իրերի ներկայ դրութեան և ռէակցիայի թագաւորութեան ժամանակ բաց անենք մեր գաղտնիքները կառավարութեան առաջ և ոչ էլ ձեզ նման սովորութիւն ունենք ամեն մի հասարակ բանի համար պաւուլ-զուրնա չալելու: Դէն գցեցէք նեղ կուսակցականութիւնը և ամեն բան պարզ կը լինի ձեզ համար:

Զարմանալի սխալվում էք, կարծելով, որ մենք հիանում ենք ձեր տափակ գլուխ ընկերների ճապաղ յօդուածներով Դաշնակցութեան դէմ, այլ ցաւում ենք, որ դուք հայ պրոլէտարիատը կերակրում էք այդ տեսակ մտքի վիժուածքներով, և փոխանակ նրա մէջ դասակարգային ինքնաճանաչութիւնը զարգացնելու, զարգացնում էք նեղ կուսակցական ոգին:

Artemios

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, սեպտեմբերի 27-ին

Բարի եղէք «Մշակի» մօտակայ համարներից մէկում տեղ տալ այս երկտողին: «Մշակի» № 208-ի մէջ Բագուի «Понедѣльникъ» թերթից վերցրած «Կուսակցութիւնների շուրջը» նկատողութեան մէջ տպագրված է.

«Հայկական սօց.-դեմօկրատական կազմակերպութեան (ֆրակցիա) մասին համագումարը կարեւոր չէ համարում խօսել՝ ի նկատի առնելով նրա ֆեդերացիական (?) տենդենցիաները»:

Այդ պարբերութիւնը «Понедѣльникъ»-ում տպագրված է այսպէս՝

«Съ армянской соц.-дем. организацiей (фракцiей) съѣздъ *не считаетъ возможнымъ слиться*, въ виду ея федералистическихъ тенденцiй»:

Պարզ է, որ խմբագրութիւնդ սխալ է թարգմանել: Բնագրում ասված է, որ «համագումարը հնարաւոր չէ համարում միանալ», այն ինչ տպագրել էք «կարեւոր չէ համարում խօսել»: Միանալ և խօսել միևնոյն հասկացողութիւնները չեն...:

Սօց.-Դեմ. Բան. Հայ Կազմ. ունի բաւականին անգամ թշնամիներ, որոնք աջողութիւններ են վաստակում միմիայն խեղաթիւրելով մեր կազմակերպչական սիստեմի բնոյթը և վատաբանելով մեր մատաղ կազմակերպութիւնը: Ահա ինչու ես, մանաւանդ այժմ, պէտք դատում եմ «Մշակի» անաջող թարգմանութեան վերաբերութեամբ: Իսկ թէ ինչումն է կայանում Սօց.-Դեմ. Բան. Հայ Կազմ. ֆեդերացիական տենդենցը՝ դրան արդէն պատասխանել է խմբագրութիւնդ իր հարցական նշանով: Մենք միայն կաւելացնենք, որ Ռ. Ս.-Դ. Բ. Կ. II համագումարից սկսած ֆեդերալիստ էր յորջորջվում և հռչակաւոր «Բունդը», բայց Ռ. Ս.-Դ. Բ. Կ. իր IV համագումարում ստիպված եղաւ շատ ու շատ չափաւորել իր յարձակողական եռանդը և տեղի տալ «Բունդի» առջև: Սօց.-Դեմ. Բան. Հայ Կազմ. վարում է Ռ. Ս.-Դ. Բ. Կ. դէմ կազմակերպչական մի պայքար և հեռու չէ այն օրը, երբ այդ կազմակերպչական պայքարը պիտի յաղթանակող հանդիսանայ իր կենտրոնականութեամբ և նպատակայարմարութեամբ:

Հայ սօցիալ-դեմօկրատ

—

Թիֆլիս, սեպտեմբերի 29-ին

Այս տարի էլ, անցեալ տարիների նման, առևտրական դպրոցների շրջանային տեսուչ Մ. Օ. Ֆիշերը նուիրել է 350 ր.՝ Մանթաշեվի վաճառային դպրոցի չքաւոր աշակերտներից 10 հոգի ազատելու ուսման վարձից: Երբ մի օտարազգի այսպիսի եռանդուն բարեգործութեան օրինակներ է տալիս, յուսալի է, որ հարուստներն էլ չեն մոռանայ դէթ հետևելու բարի օրինակին:

Տեսուչ՝ Յ. Դովլաթբէգեան

—

Թիֆլիս, 20 սեպտեմբերի

«Նոր-Խօսք» լրագրի № 1?-ում տպված էր իմ մասին, թէ ես իմ արհեստաւորներին փողը եմ կլլել: Յանուն ճշմարտութեան, խնդրըմ տալէք իմ հետևեալ բացատրութիւնը, ցոյց տալու համար, թէ իմ գործաւորներս բարոյական ոչ մի իրաւունք չունէին կոչ անելու հասարակութեան ինձանից կօշիկ չը գնելու.

Իմ խանութս պատրաստի կօշիկներ վաճառելու վրա է հիմնված, գլխաւորապէս ոչ տեղային գործերից: Այլ բան է, եթէ ես պատուէրներ ընդունելիս լինէի կօշիկներ պատրաստելու, հետևաբար, այդ դէպքում դուք կարող էիք միայն դրա մասին կոչ անել հասարակութեան: Գալով իմ խանութի համար դուրսը գործ տալուն, այսինքն տալու, որ դուրսը կօշիկներ կարեն, ինչ հիման վրա այդ բանը պէտք է արգելվի ինձ, քանի որ նոյնը անում են և ուրիշ շատ խանութներ, և ինչ հիման վրա դուրսը մնացած արհեստաւորներին մենք պէտք է զրկենք աշխատութիւնից:

Իմ արհեստանոցը բացվել է 1905 թ. նոյեմբերի 15-ից: Սկզբից որոշվել էր պատրաստի, այն է կարովի գործի համար զոյգին վճարել 2 ր. 20 կ., իսկ պատուէրի գործի համար—3 ր. 20 կ.: Սակայն 3 ամսից յետոյ, 1906 թ. փետրվարին, գործաւորները ինձանից պահանջեցին աւելացնել 30 կ. զոյգի վրա, այն է շինել 2 ր. 50 կ., ես համաձայնվեցի: Ապրիլ ամսին նորից պահանջեցին վճարել թէ պատրաստի և թէ պատուէրի գործի համար 3 ր. 20 կ.: Որքան էլ այդ պայմանը ծանր էր ինձ համար, բայց որովհետև գործը նոր էի սկսել, շատ ծախքեր արել և վերջապէս պատուէրի գործերը միայն 13°/₀ էին կազմում բոլոր գործերին, ստիպվեցայ համաձայնվել: Սակայն յունիսի 3-ին արդէն նոր պահանջ եղաւ—վճարել 4 րուբլի: Ես պատրաստականութիւն յայտնեցի պատուէրի գործերի համար վճարել նոյնիսկ 4 ր. 20 կ., բայց ոչ պատրաստի գործերի համար, որովհետև այդպիսի գին ոչ մի արհեստանոցում չը կայ և ոչ ոք չէ կարող վճարել. սակայն իմ բոլոր յորդորներս, բացատրութիւններս զուր անցան: Նրանք թողեցին գործը, ես էլ դադարեցրի, որովհետև այդպիսի պայմաններում շարունակել արհեստանոցը անհնարին էր:

Այժմ $3^1/_2$ ամիս դադարից յետոյ ինձ մեղադրում են, թէ ես իմ արհեստաւորներին փողը եմ կլլել:

Իմ արհեստանոցում, սկսած 1905 թ. նոյեմբերի 15-ից մինչև 1906 թ. յունիսի 5-ը պատրաստվել են ընդամենը 591 զոյգ կօշիկներ, որոնցից միայն 13°/₀-ը պատուէրով. իւրաքանչիւր գործաւոր իր աշխատած գործի գումարը լրիվին ստացել է:

Այդ 591 զոյգից մնացել է չը վաճառված 200 զոյգ, որովհետև գները մատչելի չեն. ես անվերջ չէ կարելի մի ապրանքի գինը աւելացնել: Միւս կողմից ինձ թոյլ չեն տալիս իմ գործաւորները, որ դուրսը էժան գնով գործ տամ պարապ արհեստաւորներին: Չէ՞ որ այդպիսի պայմաններում գործ վերսկսել արհեստանոցում անհնարին է:

Մշակեցէք այնպիսի պայմաններ, որ հնարաւոր լինի արհեստանոցը վերաբանալ: Ապացոյց, որ այդպիսի ծանր պայմաններին չը կարողացաւ դիմանալ և մի առաջնակարգ ու տասնեակ տարիներից ի վեր գոյութիւն ունեցող արհեստանոց և փակվեց:

Կ. Կարապետեան

—

Թիֆլիս, սեպտեմբերի 29-ին

«Մշակի» № 210-ում լոյս է տեսել «Մուշեղ» ստորագրութեամբ իմ բաց նամակը ուղղված դաշնակցական ընկերներին, որից դուրս է գցված մի ամբողջ կտոր խմբագրութեան կողմից՝ ինձ անյայտ պատճառներով: Խնդրում եմ այդ կտորը ամբողջութեամբ աւելացնել մօտակայ համարներից մէկում: Այն, որ մի ժամանակ մենք ունեցել ենք մի ընկեր, բայց որովհետև տհաս էր և անընդունակ էր այդ ընկերը, նա հետզհետէ կորցրեց մեր բոլորի յարգանքը և ոչ ոք չէր վստահանում որևէ պատասխանատու գործ յանձնել նրան: Այդ ընկերը ձեռք մեկնեց մեր թշնամիներին, որովհետև կարծում էր, թէ սրանց միջոցով կը կարողանայ մի փառքի տիրանալ: Իր այդ գործով նա դադարեց մեր ընկերը լինելուց: Նրա անունը Միհրան է:

Թող բոլոր դաշնակցական ընկերները և ամբողջ հայերը գիտենան, որ այդ Միհրանը թէ մեր նահատակների և հերոսների յիշատակը և թէ տաճկահայ գործը ուզում է ծառայեցնել իր անձին և իր փառքին: Թող գիտենան այդ և դադարեն նրան պաշտպանելուց և նրա ասածները հերքելուց: Նա արժանի չէ մեր ուշադրութեանը: Արհամարհանքի դատապարտենք այդ Միհրանին և աշխատենք ուղղել մեր թերութիւնները և առաջ տանել հայ ժողովրդի ազատութեան դատը:

Սասունի զինուոր Մուշեղ

—

Խմբագրութեան կողմից: Մենք մի քանի անգամ յայտնել ենք և այժմ էլ կրկնում ենք, որ մենք չենք ցանկանում, որ յարուցված վիճաբանութեան մէջ զբաղվեն անձնական հաշիւներով և բացատրութիւններով, այլ աչքի առաջ ունենան միայն և միայն հասարակական հոսանքներին և ծրագիրներին վերաբերեալ խնդիրները: Մեզ համար նշանակութիւն չունեն Միհրաններ, Մուշեղներ, Խէչօներ, Համօներ, Սեպուհներ և ուրիշ անուններ, այլ այն գաղափարները և ծրագիրները, որոնց անունից նրանք խօսում են և ուզում են լուսաբանել իրանց վէճերով: Պարզեցէք խնդիրները և օգնեցէք միմեանց լուծելու այն հանգոյցները, որոնք ասպարէզ են եկել և մինչև այժմ չեն գտել բաւարար լուծում և թողէք ձեր անձնական յարաբերութիւնների վերաբերեալ ակնարկները:

—

Թիֆլիս, սեպտեմբերի 29-ին

Խնդրում եմ «Մշակի» մէջ տեղ տալ ներկայ երկտողիս, որ գալիս է ասելու, թէ «Մշակի» № 209-ի լուրն իմ նկատմամբ սխալ է: Սինօդը ոչ միայն չէ ձեռնարկել, այլ և չէր կարող ձեռնարկել ինձ կարգալոյծ անելու խնդրին: Ինչ վերաբերում է իմ հրաժարվելուն, դա եղել է սեպտեմբերի 13-ին գրված յայտարարութեամբս: Իմ դէմ սինօդի ձեռնարկածն եղել է՝ ինձ Ալէքսանդրապօլի պաշտօնիցս հեռացնելը. այդ կարգադրութիւնն եղել է հեռագրով՝ ամսիս 14-ին: Իմ մօտիկ ընկերներն ու ծանօթները գիտեն, որ հոգևոր կոչումը թողնելս վճռված է եղել շատ առաջ, քան թէ էջմիածնում մեր խղճուկ բիւրօկրատները կը մտածէին ինձ Ալէքսանդրապօլից հեռացնել:

Մատնութիւններ անելու ճաշակն առած մի քանի սուրբ հայրերի հետ հաշիւս կը տեսնեմ իր ժամանակին. առ այժմ այսքան:

Արսէն Ղլտճեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի Փոխարքան, որը սեպտեմբերի 28-ին որսի էր գնացել, սեպտեմբերի 29-ին վերադարձել է Թիֆլիս: Որսին մասնակցել են մի քանի հրաւիրված անձեր:

—

Աղէտեալների օգտին ստացանք. 1.) Այրի Սօֆիա Յովսէփեանից (Թիֆլիս) իր հանգուցեալ ամուսնու՝ Միքայէլ-խան Յովսէփեանի մահվան առիթով տալիք ճաշկերոյթի փոխարէն 100 ր., որից 50 ր. Շուշու, 25 ր. Զանգեզուրի և 25 ր. Սօս գիւղի աղէտեալների օգտին. 2) տիկ. Սաթենիկ և Խաչատուր Ադամեանցներից 26 ր. յիշեալ Միքայէլ-խան Յովսէփեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն:

—

«Մշակ»-ի Նախորդ համարներից մէկում տպված էր, որ Թէմիր-Խան-Շուրայից ստացվել է մի հակ շորեղէն տառապեալների համար: Հարկաւոր ենք համարում ուղղել մի սխալ. ստացվել է ոչ թէ մի, այլ երկու հակ, որ և յանձնել ենք նպաստամատոյց յանձնաժողովին:

—

Տիկին Սիրանոյշը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Խնդրում եմ տեղ տալ երկտողիս «Մշակ»-ի մի փոքրիկ անկիւնում: Յայտնում եմ համակրական զգացմունքներս Վառնայի գեղարուեստասէր երիտասարդութեան, որ կամեցաւ իմ մատղած գործնական այցելութեանս առիթով ցոյց տալ իր սիրալիր ընդունելութիւնը և գործունէութիւնը. բայց յայտնում եմ ցաւօք սրտի, որ ինձնից անկախ պատճառներով առժամանակ ստիպված եմ յետաձգել իմ գալուստը»:

—

Երէկ, սեպտեմբերի 30-ին, ցերեկվայ ժամը $10^1/_2$-ին տիկ. Հերիքնազ Ամատունին պօստից ստացել էր 50 րուբլի փող: Կողքին կանգնած մի երիտասարդ, աշակերտական հագուստով, խլում է յիշեալ տիկնոջ ձեռքից փողը և, օգտվելով առաջացած շփոթութիւնից, դուրս է վազում ու անյայտանում:

—

Երէկ Թիֆլիսի գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ փակվել է վրացերէն լեզւով հրատարակվող «Թրդալի» լրագիրը. կալանաւորված է խմբագիր Գերասիմ Ջանելաձէն:

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը, օգտվելով դէպքից, որ դումայի ձայնաւոր Ա. Ս. Բարօվը գտնվում է Ռուսաստանում, յանձնարարել է նրան Պետերբուրգի կառավարչական համապատասխան հաստատութիւնների մէջ տեղեկութիւններ հաւաքելու Թիֆլիս քաղաքի գործերի գրութեան մասին, այսինքն, գլխաւոր զինուորական խորհրդի և զինուորական մինիստրութեան մէջ իմանալ Թիֆլիսի պարտքերի դրութեան մասին, որ պիտի տայ գանձարանին, ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան մէջ՝ երկաթուղային հիւանդանոցի համար քաղաքից վերցրած հողի վարձատրութեան հարցի մասին, Կառավարիչ Սենատի առաջին դեպարտամենտում՝ քաղաքային դումայի զանազան բողոքների մասին Թիֆլիսի նահանգական վարչութեան որոշումների դէմ, նոյնպէս և Ներքին գործերի մինիստրութեան մէջ՝ հիւանդանոցային տուրք սահմանելու հարցի մասին, քաղաքը ոստիկանութիւն պահելու ծախքերից ազատելու մասին և այլն: Միաժամանակ քաղաքային վարչութիւնը յանձնարարում է ձայնաւոր Բարօվին նաև պատրաստական բանակցութիւններ սկսել մայրաքաղաքի բանկերի և մասնաւոր ֆիրմաների հետ այն հարցի մասին, թէ ինչ պայմաններով նրանք փոխատւութիւն կարող են տալ Թիֆլիս քաղաքին և ինչ չափով:

—

Սեպտեմբերի 29-ին Թիֆլիսի նահանգական բանտում կատարվել է զինուորական-դաշտային դատարանի վճիռը—կախաղան բարձրացնել Ս. Սիրաձէին, որը մեղադրվում էր 2-րդ արական գիմնազիայի կողոպտման մէջ:

—

Ծարսկի-Կօլօդցից հաղորդում են «Тифлисъ» լրագրին, որ Սղնախի գաւառապետ Արնօլդը, որը այնտեղ էր գնացել բժշկվելու համար, վախճանվել է:

—

Գլխաւոր ինտենդանտների վարչութեան կառավարիչը հրամայել է Թիֆլիսի շրջանային ինտենդանտին հետևեալը. «Զինուորական մինիստրը տեղեկացել է, իբրև թէ՝ Փոխարքայի կողմից նշանակված զինուորական մասնաժողովները՝ Ալէքսանդրոպոլի, Արդուինի, Արդահանի և Սուխումի զօրքերի պաշարները գտել են, որ գործածութեան համար պիտանի չեն և զօրքերին արդարացի անբաւականութիւն է պատճառում: Խնդրում եմ անյապաղ հեռագրել ինձ՝ զինուորական մինիստրին զեկուցանելու համար, ներկայ տարվայ ընթացքում անպէտք պաշարներ եղել են արդեօք, ո՞րքան, ո՞ր մթերքներից և ինչ միջոցներ են ձեռք առնվել, փոխարինվել են մթերքները—և փչացած մթերքները ինչ են արվել, նոյնպէս և՝ ո՛վ է մատակարարել այդ մթերքները»:

—

Սեպտեմբերի 24-ին մասնաւոր հաւատարմատար Միրզոյեվը, մօտաւորապէս գիշերվայ ժամի 1-ին, Կիրպիչնի փողոցի վրա՝ իր տան մուտքի առաջ № 13, երեք չարագործների ձեռքով կողոպտվում է: Կողոպտիչները խլելով նրա փողի քսակը, 180 րուբլի գումարով, անյայտանում են: Չարագործներն անյայտ են:

—

Սեպտեմբերի 27-ին պահեստի կօզակ Եսաուլ Սիմօնովը Օլգինսկի փողոցի վրա գտնվող պանդօկում գինի էր խմում և հիւրասիրում իրան ծանօթ մի քանի երիտասարդների: Երբ հիւրասիրելուց յետոյ Սիմօնովը դուրս գալով անցնում էր Ֆեօդոսիեվսկի փողոցով, նրա ետևից հասան յիշեալ երիտասարդները և սպառնալով՝ խլեցին նրա մօտ եղած 5 րուբլին և ժամացոյցը: Չարագործների անձնաւորութիւնները յայտնի են. նրանցից մէկը Թիֆլիսի կրուժօկի բուֆէտչիկի որդի Բօրիս Լևիցկին է, որը ապրում է իր սեփական տանը:

—

Սեպտեմբերի 25-ի երեկոյեան, Վերին Աւչալայում, ատրճանակներով ու դաշոյններով զինված 6 չարագործներ մտնում են Անդրէյ Բեգկինի և Պաւել Կարալեցի բնակարանը և փող պահանջում: Խլելով 51 րուբլի փող և կողոպտելով 146 րուբլու արժողութեամբ իրեղէններ, դուրս են գալիս ու անյայտանում: Միջոցներ են ձեռք առնված կողոպտիչներին բռնելու համար:

—

Բաքուից հաղորդում են, որ սեպտեմբերի 11-ին այնտեղ ժանդարմական ունտեր-օֆիցեր Ստ. Տիմչենկօն ձերբակալել է փախստական Գէորգ Տէր-Ղուկասեանցին, որը, գողանալով 20 հատ եռագծեան հրացաններ, փախել էր:

—

Մինչ հաղորդել էինք, որ շուտով Բաքւում լոյս էր տեսնելու Թուրքերէն մի նոր հանդէս՝ «Րէհբէր»: Յիշեալ հանդէսը արդէն լոյս է տեսել. ահա ինչ է գրում այդ մասին «Իրշադը». «Փառք Աստուծոյ մեր մամուլը օրըստօրէ զարգանում է: Բաքւում «Իրշադի» և «Դէբեստանի» ընկեր և օգնական դուրս եկաւ մի նոր հանդէս: Հանդէսի խմբագիրն է Բաքուի ուսուցիչներից Մահմուդ-բէգ Մահմուդ-բէգօվ: «Րէհբէր»-ը ամսաթերթ է: Բաժանորդագինը շատ էժան է. չորս ամսվայ համար 1 ր. 50 կ.: Ցանկացողները պէտք է դիմեն «Դէբեստանի» խմբագրութեան: «Րէհբէրի» լեզուն շատ դիւրամատչելի է. նպատակը՝ մեր ազգի հոգևոր կարիքները պարզել և նրանց գոհացնելն է: Առաջին համարում «Րէհբէրը» այսպէս է ողջունում իր նպատակը. «Մեր նպատակն է մեր դպրոցների կանոնաւորութեան, մեր ազգի կեանքում ուսման և գիտութեան զարկ սատանալուն, ազգային գրականութեան հետ ծանօթացման և տարածման աշխատել, որքան ներում են մեր ուժերը: Մենք մեր ջանքն ու ճիգը գործ պիտի դնենք կատար ածելու համար մեր սահմանված պարտականութիւնը: Եւ այն յոյսն ունենք, որ մեր ջանքերը ապարդիւն չեն անցնի...»: Ինչ գեղեցիկ ցանկութիւններ, ինչ մաքուր նպատակներ! Մեր բոլոր նորահաս երիտասարդները այս տեսակ բարձր ու մաքուր ձգտումներով լցված են, և դրա համար նրանք անում են այն բոլորը, ինչ կարող են: Օրինակ, մեր հասարակութեան յայտնի է, արդեօք, թէ ինչ մեծ նեղութիւն, ինչ մեծ անձնուիրութիւն է հարկաւոր մեր ոչ-հարուստ, դրամազուրկ երիտասարդների համար լոյս ընծայելու մի այդպիսի լրագիր: Հետևաբար ազգը պէտք է օգնութեան հասնի նրանց, որպէս զի նրանց աշխատանքը զուր չը կորչի: Չը պէտք է թողնել, «Րէհբէրն» էլ «Հայաթի» բաղդին արժանանայ: Աջողութիւն ենք ցանկանում մեր ընկերին»:

—

Ջէբրայիլից գրում են «Кавказъ» լրագրին, որ սեպտեմբերի 18-ին յայտնի աւազակ Իսմայիլ Արուշ-օղլին իր ընկերով յարձակվել է Խանլըղ գիւղի բնակիչ Իսրաֆիլ Ալլահվերդի-օղլու վրա, որը գտնվում էր իր պարտիզում: Աւազակները խլել են նրանից ատրճանակը և քշել են տաւարը: Իսրաֆիլ Ալլահվերդի օղլին աղմուկ է բարձրացրել, որից մօտ են վազել համգիւղացիք և նրանց միջև հրաձգութիւն է տեղի ունեցել, որի ժամանակ սպանվել է աւազակախմբի գլխաւորը՝ Իսմայիլ Արուշ-օղլին, վիրաւորվել է Խանլըղ գիւղի բնակիչ Նուռ-Հաջի Սուլէյման-օղլին և գողացված տաւարը հետ է բերված:

—

Գօրու գաւառից հաղորդում են, որ սեպտեմբերի լոյս 22-ի գիշերը Ցխինվալում մի քանի անյայտ անձեր սպանել են իր բնակարանում Շինդիսի գիւղական վարչութեան գրագիր Սէմեօն Տատիեվին, նրա հօրը՝ Իվան Տատիեվին, իսկ նրա մօրը՝ Մարիամին վիրաւորել են: Մարիամ Տատիեվը պատմել է, որ չարագործները գիշերվայ ժամը 9-ին թխկացրել են պատուհանը և նրա ամուսնուց պահանջել են անցագիր. ամբողջ ընտանիքը, բացի իրանից, քնած է եղել: Երբ վերջինը բաց է արել դուռը, ներս են մտել 3 անյայտ չարագործներ, իսկ 4-րդը մնացել է դուրսը, և փող են պահանջել: Սէմեօն Տատիեվը տուել է վերջին կոպէկները՝ 53 րուբլին, բայց չարագործները դրանով չեն բաւականացել և պահանջել են զէնք: Տատիեվը զէնք չունենալու պատճառով մերժել է, որի հետևանքը եղել է հօր և որդու սպանութիւնը: Չարագործները անյայտացել են:

—

Ստացանք Դ. Կլդիաշվիլիի «Ծխականների մէջ» գրքոյկը, հեղինակի պատկերով և ինքնակենսագրութեամբ, թարգման. Ղ. Կ.-ի. գինն է 10 կոպէկ:

—

Շամախում նոր բացվելիք ռէալական դպրոցի նշանակված տեսուչ Ծատուրեանը հրաժարվել է այդ նոր պաշտօնից:

—

Պօբէդոնօսցեվը ներկայումս Ռուսաստանի մէջ ընդհանուր ընտրողական իրաւունք մտցնելու ամենաջերմեռանդ հակառակորդներից մէկն է հանդիսանում: Այդ օրէնքը մտցնելուն դիմադրելու և հասարակութեան համակրութիւնը նրանից հեռացնելու նպատակով, Պօբէդոնօսցեվը ֆրանսերէնից թարգմանելով հրատարակել է պրոֆ. Պրինսի մի գրքոյկը «Ընդհանուր ձայնատուութիւն» վերնագրով, ուր ապացուցվում է, որ ընդհանուր ընտրողական իրաւունքի ժամանակ ներկայացուցչութիւնը իսկական ժողովրդական ներկայացուցչութիւն չէ:

—

Վերջնականապէս պարզվել է, որ Պետական Դումայի ընտրութիւնները մտադրութիւն կայ կատարելու յունվարի սկզբից ոչ վաղ: Իսկ ժամանակների նշանակելը տեղի կունենայ դեկտեմբերին: Ընտրութիւնները վերջանալու են աւելի վաղ, քան թէ առաջին ընտրութեան ժամանակ: Այդ նպատակով ամբողջ կայսրութեան մէջ կը նշանակվի միայն երկու ժամանակամիջոց, շատ մօտիկ իրար: Դրանով մտադիր են ագիտացիայով զբաղվողների գործունէութիւնը ապարդիւն դարձնել:

—

«Страна» լրագիրը լսել է, որ պետական կօնտրօլը ուշք է դարձրել այն անօգուտ կապալագումարների վրա, որ ամեն տարի ստանում են բարձրաստիճան շատ անձինք, նրանց այրիները և զաւակները, բացի ստացված ռոճիկներից: Ի նկատի առնելով պետական գանձարանի ներկայ սուղ միջոցները, զանազան վարչութիւնների նախահաշուի կրճատումներից բացի, վճռված է շօշափել և այդ հարցը:

—

Վիլնայում մօտ ժամանակներս կայանալու է հրէական ուսուցիչների և հրէայ ժողովրդի կրթական գործիչների համագումարը:

—

«Страна» լրագիրը տեղեկացել է, որ բանւորական պատգամաւորների խորհրդի դատավարութեանը հանդիսատես հասարակութեան մէջ վխտում են ծպտեալ քաղաքապահներ, որոնք հսկում են կասկածաւոր անձանց վրա, լսում են խօսակցութիւնները և անմիջապէս հաղորդում պրիստաւներին իրանց արած դիտողութիւնների մասին:

—

Վերջին օրերս ոստիկանական դեպարտամենտը 50 կարգադրութիւններ է արել՝ քաղաքական աքսորեալներին թոյլատրելու հիւսիսային նահանգներից արտասահման գնալու համար: Վերջիններիս նախազգուշացնում են, որ երկու տարուց վաղ Ռուսաստան վերադառնալու դէպքում, նրանք նորից կուղարկվեն իրանց աքսորավայրերը:

—

Արտակարգ և զօրեղացրած պահպանութեան հիման վրա Պետերբուրգի քաղաքապետի սեպտեմբերի 23-ի հրամանի համաձայն, մայրաքաղաքից աքսորվել են 50 հոգի: Բացի այդ՝ 26 հոգի տուգանքի են ենթարկվել և բանտարկվել ? ամիս ժամանակով, որոնցից 13-ը ոստիկաններին անպատւելու համար տուգանքի են ենթարկվել, իսկ 13-ը բանտարկութեան՝ գործադուլի գրգռումներ անելու համար:

—

«Товарищъ» լրագիրը հաղորդում է արժանահաւատ աղբիւրներից, որ, չը նայելով համալսարաններին ու բարձրագոյն դպրոցներին տուած բացարձակ ինքնավարութեանը, կառավարչական մի քանի հաստատութիւնների մէջ պահվում են ուսանողական ատակների և սօց.-դեմ. ու սօց.-յեղ. ուսանող. ֆրակցիաների պարագլուխ ուսանողների ցուցակները: Մօտ օրերս ոստիկանական դեպարտամենտը, նահանգական ժանդարմների վարչութիւնը և խուզարկու ոստիկանութիւնը վերստուգել են 3 օրինակ ցուցակները:

—

Փարիզից «P. C.» լրագրին հեռագրում են. «Արժանահաւատ աղբիւրից կարող ենք հաղորդել, որ դեռ մօտ ժամանակներս յայտնի դեր խաղացող մի անձ պետական գործիչների շրջանում ստորագրութիւն է հաւաքում մի պետիցիա ուղարկելու կայսրին, որտեղ այն միտքն է շօշափւում, որ սահմանադրական կարգը Ռուսաստանի համար կորստաբեր եղաւ: Յամառ կերպով խօսում են, որ այդ անձը յոյս ունի բարձր զինուորական հրամանատարներին ևս ստորագրել տալու»:

—

Սեպտեմբերի 24-ին դէպի Հարաւային Ռուսաստան է ուղևորվել Հիւսիսային Ամերիկայի դեսպան Լանգերկէ Մէյեր տեղական իրերի դրութեան հետ ծանօթանալու համար:

(«P. B.»)

—

Պետական և մասնաւոր երկաթուղիների վարչութիւնները արդէն ներկայացրել են քաղաքային վարչութեանը իրանց այն ծառայողների ցուցակները, որոնք իրաւունք ունեն մասնակցելու Պետական Դումայի ընտրութիւններին:

—

Ալյֆիւզովի քաղաքային հիւանդանոցում թերիմացութիւն է ծագել հիւանդանոցի վերահսկիչի և հիւանդների միջև սնունդի վերաբերեալ անբաւականութիւնների պատճառով: Միջադէպը վերջացել է նրանով, որ վերահսկիչը ոստիկանութիւն է կանչել տուել, իսկ հետևանքը, լուրերին նայելով, եղել է այն, որ հիւանդանոցի չորս հիւանդները ծեծվել են:

(«P. B.»)

—

Ստոլիպինը, բեռլինեան «Post» լրագրի ասելով, յայտնել է արտասահմանեան թղթակիցներից մէկին, որ Դուրնօվօի մասին տարածված լուրերը, իբրև թէ նա անձամբ մօտ է իրան և կաբինետին, բոլորովին անհիմն են: Դուրնօվօի արտասահմանից վերադառնալուց յետոյ Ստոլիպինին չէ պատահել, ոչ մի դէպքում ոչ միայն զրուցել է նրա հետ, այլև տեսնվել: Դուրնօվօն այնքան է հետաքրքրվում քաղաքականութեամբ, որքան որ նա իբրև Պետական Խորհրդարանի անդամ պարտաւոր է: Նախկին ներքին գործերի մինիստրի վերաբերմամբ տարածված լուրերը, որ նա մասնակցում է ներկայ կաբինետի քաղաքական գործունէութեանը, կարող են առաջացած լինել նրա շնորհիւ, որ Դուրնօվօն, մինչև որ մասնաւոր բնակարան կը տեղափոխվէ, շարունակում է դեռ ապրել այն բնակարանում, ուր նա ապրում էր իբրև կոմս Վիտտէի կաբինետի անդամ («P. B.»):

—

Գեներալ Տրեպօվը թողել է յիշատակարաններ, որոնք գրված են եղել օրագրի ձևով: Այդ յիշատակարաններից զանազան կտորներ կը հրատարակվեն: («Сегодня»)

—

Պետերբուրգի 32 քահանաներից բաղկացած մի խումբ, որ կոչվում են վերանորոգչականներ, կազմել են եկեղեցական վերանորոգութեան նախաձեռնողների միաբանութիւն: Միաբանութեան կանոնագրութիւնը Պետերբուրգեան թեմական իշխանութեան կողմից հաստատվելուց յետոյ կայացել է միաբանութեան անդրանիկ ընդհանուր ժողովը: Այժմ մնում է, որ կառավարութեան կողմից օրինականութիւն ստանայ միաբանութիւնը և այդ մասին [illegible] են նրանք: Անդամներից ոմանք պնդում էին, որ անհրաժեշտ է ընդարձակել միաբանութեան անդամների շրջանը, ընդունելով աշխարհիկ ինտելլիգենտներից ևս անդամներ, հրապարակական ժողովներ սարքելով, հին կրօնական-փիլիսոփայական ժողովների նման: Առանձին հոգս է պատճառում միաբանութեանը մշտական ղեկավար մարմին ունենալու խնդիրը, որի միջոցով միաբանութեան գաղափարը տարածվեր լայն շրջաններում, սակայն միջոցներ չը կան հրատարակութիւնների համար: Թեմական իշխանութեան վերաբերմամբ միաբանութիւնը կիսանկախ և կիսինքնուրոյն մի հաստատութիւն է: Կանոնագրութեան համաձայն այդ յարաբերութիւնները հետևեալ կերպով են որոշված, միաբանութեան բոլոր արձանագրութիւնները, վճիռները և որոշումները գրաւոր կերպով հաղորդվում են Պետերբուրգի միտրոպօլիտին ի գիտութիւն: Եթէ միտրոպօլիտը միաբանութեան գործունէութեան մէջ կը նկատէ որևէ հակասութիւն քրիստոնէական ուղղափառ եկեղեցու կանոնների դէմ և եկեղեցական հնազանդութեան, այդ դէպքում, եթէ միաբանութիւնը հրաժարվելու լինի ենթարկվել իր եպիսկոպոսի ցուցմունքներին, նրա հետ վարվում են եկեղեցական կանոնների համաձայն.

(«Страна»)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

29 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 սեպտեմբերի: Այսօր Հելսինգֆորսում սահմանադիր-ռամկավարական կուսակցութեան համագումարի փակման առիթով «Россія» լրագիրը ասում է. «Այն, ինչ որ տեղի ունեցաւ Հելսինգֆորսում, ոչ միայն հաստատեց կառավարութեան ենթադրութիւնը և կասկածանքը, այլ մինչև անգամ դրանից անցկացաւ. այժմ ոչ ոք չէ կարող ասել, որ համագումարի թոյլտուութիւնը կառավարութեան գործունէութեան ակտի հետևանքն է, որը գնում է հակառակ՝ խոստանալով չը քաշվել հասարակական կարծիքի ազատ արտայայտութիւնից, ձգտելով ստեղծել մի կազմակերպութիւն այն նպատակով, որ քանդի պետութեան հիմքերը, ոչ մի պետութեան և ոչ մի հանգամանքների պատճառում չի մտնում այն շրջանի մէջ, ինչ որ հասկացվում է հասարակական կարծիքի ազատ արտայայտութեան տակ»:

ՄՈՍԿՎԱ, 28 սեպտեմբերի: Այսօր քաղաքապետին այցելեց անգլիական հիւպատոսը և յայտնեց, որ ինքը ստանում է բազմաթիւ հեռագիրներ, որոնք բողոքում են անգլիական պատգամաւորութեան գալու դէմ. կը ցանկանար իմանալ այդ հարցի առիթով քաղաքապետի կարծիքը: Քաղաքապետը պատասխանելով, խնդրեց նրան այդ հարցի վրա նայել որպէս անգլիացի. Անգլիայում, այդ երկրում, որտեղ այնչափ բարձր գնահատվում է ազգային հպարտութիւնը, ժողովուրդը նոյնպէս կը բողոքէր, եթէ մի այդպիսի պատգամաւորութիւն պատվէր այն Դումայի անդամներին, որոնք ստորագրել էին Վիբորգի կոչը:

ՄՈՍԿՎԱ, 28 սեպտեմբերի: Քաղաքագլուխը՝ Հերցենշտէյնի յիշատակը պատւելու հարցի առիթով—ստանում է բողոքներով լի բազմաթիւ նամակներ, որոնց մէջ սպառնում են քարուքանդ անել այն բոլորը, ինչ որ կը շինվի Հերցենշտէյնի յիշատակի համար:

ՎԱՍԻԼԿՈՎ, 28 սեպտեմբերի: Զինուորական-դաշտային դատարանը Րոմանովի գիւղի բնակիչ Զուպրինին՝ իր մօտ գտնված 5 ռումբերի համար դատապարտեց 15 տարվայ տաժանակիր աշխատանքների:

ՊԵԿԻՆ, 28 սեպտեմբերի: Ժամանեց ճապոնական պրինց Կունիման և այցելեց չինական արքունիքը՝ ի պատասխան այն այցելութեան, որն արեցին չինական պրինցները ճապոնական արքունիքին: Այս այցելութիւնը պատմութեան մէջ առաջինն է:

Կ. ՊՈԼԻՍ, 28 սեպտեմբերի: Մօնաստիրի շրջանում յունական չէտան բռնեց չորս հովիւ, բուլղարացիների, և կտոր կտոր արաւ, և 14 ուրիշ բուլղարացիներ Կաստորիայի շրջանում. 6 յոյն ամբոխարդներ սպանված են բուլղարական չէտայի ձեռքով:

ԼՈՆԴՈՆ, 28 սեպտեմբերի: Լրագրների հաղորդած լուրերին նայած, պատգամաւորութեան ուղևորութիւնը Ռուսաստան տեղի չի ունենայ, միայն կոմիտէտի անդամներից մէկը կը տանէ շնորհաւորական ուղերձը Պետերբուրգ, և առանց որև է հանդիսաւորութեան կը յանձնի այն անձնաւորութեան, որին յանձնված կը լինի ընդունելու ուղերձը:

30 սեպտեմբերի

ՎՈՐՈՆԷԺ, 29 սեպտեմբերի: Նահանգապետը կարգադրեց, որ Պետական Դումայի նախկին պատգամաւորներ Րօստովցևին և Խրուշչևին արձակել նահանգական և գաւառական զեմստվային ժողովների կազմից: Րօստովցևին որը մեղադրվում է 129 յօդուածի հիման վրա, արձակել Վորոնէժի քաղաքագլխի պաշտօնից:

ԲԵԼԳՐԱԴ, 29 սեպտեմբերի: Ընդհանրութեան կարծիքով կառավարութիւնը սկուպշչինայում կը պահանջի իր գործողութիւնների եղանակը քուէարկութեան ենթարկել, որը առաջացել է Աւստրո-Ունգարիայի հետ ունեցած մաքսային կոնֆլիկտի առիթով և խրախուսիչ քուէ ստանալուց յետոյ իսկոյն կը հրատարակէ Աւստրո-Ունգարիայի մաքսային պատերազմ:

ԿԱՐԴԻՖ, 29 սեպտեմբերի: Առևտրական վարչութեան նախագահ Լլօյդ Ջօրջը իւր ճառում յայտնեց, որ լիբերալների հայեցակէտով բանուորական կուսակցութեան ազդեցութեան անհանգստանալու հիմք չէ տալիս. ոչ մի կուսակցութիւն չէ կարող յոյս տածել աջողութեան վրա, մինչև ձեռք չի բերի մեծագոյն մասի հզօր միջին դասակարգի վստահութիւնը. գիւղական սեփականատէրին, մանր առևտրականներին ու արհեստաւորներին դարձնել սօցիալիզմի կողմնակիցներ անկարելի է, բայց նրանց հեշտ է հրել բէակցիայի գիրկը: Լլօյդ Ջօրջը չէ բացասում, որ բանուորական կուսակցութիւնը կը լինէր ամենակարող, եթէ միայն նրան աջողվէր զատելու պահպանողական և լիբերալ կուսակցութիւններից բանուորական դասակարգին պատկանող իրանց մարդկանց, դրանց անելով ընդհանուր բանուորական կուսակցութեան կողմնակիցներ:

ՎԱՐՇԱՎԱ, 29 սեպտեմբերի: Տեղի ունեցաւ լեհական լրագրի խմբագիր Գադոմսկու թաղումը, որը համարվում է ամենալաւերից մէկը լեհական հրապարակախօսների: Կորպորացիաներից, մասնաւոր ուսումնարաններից ու մամուլի բազմաթիւ ներկայացուցիչներից և հազարաւոր ամբոխը իր ներկայութեամբ բողոքեց վայրենի անարխիայի դէմ:

ԼՈՆԴՈՆ, 29 սեպտեմբերի: Աչքի առաջ ունենալով հրապարակական բողոքները բազմաթիւ ռուսաց ընկերութիւնների և խմբերի կողմից, անգլիական պատգամաւորութեան գնալը տեղական և Պետերբուրգի կոմիտէտների համաձայնութեամբ յետաձգված է:

ՄՈՍԿՎԱ, 29 սեպտեմբերի: Հոկտեմբերի 17-ի կուսակցութեան միացեալ ժողովը վճռեց հետևեալ վերջնական բէզօլիւցիան: Միութիւնը միշտ իր գլխաւոր նպատակ է ունեցել նպաստելու պետութեան կարգի խաղաղ վերանորոգման հոկտեմբերի 17-ի մանիֆէստի հաստատ հիմքերի վրա: Եթէ տարաձայնութիւն գոյութիւն ունի միութեան և Շիպովի մէջ, դա չէ նշանակում, որ միութեան մէջ փոփոխութիւններ առաջ եկան: Կուսակցութիւնը շեշտում է իր անխախտ ուղղութեան վրա: Սահմանադիր-ռամկավարականները, որոնք ղեկավարում էին Դուման, հրաժարվեցին դատապարտելու սպանութիւնները, չարդերը և յեղափոխական բռնութիւնները մասնակից եղան հակակառավարչական գործողութիւնների դէմ ուղղված կոչի մէջ. միւս կողմից կառավարութիւնը ձեռնարկեց վերջնականապէս անարխիային և յեղափոխական հողի վրա առաջացած աւազակութիւնների ճնշման, կանգ չառնելով ոչ մի ծայրահեղ միջոցների առաջ: Հոկտեմբերի 17-ի միութիւնը խոստանում է, որ ծանր անհրաժեշտութիւնը կարող է ստիպել բացառիկ դէպքերում դիմել խիստ միջոցների, բայց այդ միջոցները չը պէտք է անցնեն այն խստութեան սահմաններից, որոնք կարող են բորբոքել բարոյական զգացմունքները և խզել դէպի պետական իշխանութիւնը ունեցած վստահութիւնը: Միութիւնը պնդում է, որ յեղափոխական շարժման դէմ կռւի ոչ մի միջոցները չեն տալ իսկական խաղաղութիւն առանց հաստատելու սահմանադրական կարգ և դեմօկրատական բարենորոգումներ: Լինելով սահմանադրական, միութիւնը չէ կարող համակրել (?) անմիտ թունաւորման կանգնած է կառավարութեան իշխանութեանը մօտ, որը մղում են ծայրահեղ կուսակցութիւնները մինչև նոր ներկայացուցչութեան հաւաքելը, երբ որ հաւանականութիւն չը կայ փոխելու ներկայ բիւրօկրատական կաբինէտը մի ուրիշով: Մինիստրութեան դէմ յամառ ագիտացիան ոչ մի խելացի նպատակի չէ ծառայում, այլ միայն կարող է թուլացնել ամեն մի ապագայ իշխանութիւն և խաղալիք դառնալ անարխիային: Դիմելով խելացի աշխատանքի ճանապարհով, միութիւնը գտնում է միակ ելքը՝ ընտրելու մի այնպիսի ներկայացուցչութիւն, որը ոչ միայն կը ցանկանայ, այլ և կարող է ուղղել Ռուսաստանին, հաստատելու սահմանադրական կարգ և ազատութիւն:

ՄՈՍԿՎԱ, 29 սեպտեմբերի: Քաղաքային ինքնավարութեան գիշերվայ նիստում տեղի ունեցան տաք վիճաբանութիւններ անգլիական պատգամաւորութեան գալու առիթով: Մեծամասն.-ը 60-ով ընդդէմ 5-ի. քաղաքային դուման ընդունեց հետևեալ բէզօլիւցիան: Աչքի առաջ ունենալով, որ Մոսկվայի քաղաքային ինքնավարութեան կարող են դիմել յայտարարութիւնով, որ մասնակցութիւն ունենայ Ռուսաստան եկող օտարազգի պատգամաւորների ընդունելութեան մէջ յանձնելու ուղերձ Պետական Դումայի նախկին պատգամաւորներին, և խոստովանելով, որ պատգամաւորութեան վերաբերմամբ այդպիսի մի քայլ թոյլ տալը համարվում է քաղաքական ցոյց և վիրաւորական ազգային զգացմունքների համար, յանձնարարել քաղաքագլխին, որ այն դէպքում, եթէ մի այդպիսի դիմում լինի, պատասխանել բացասական կերպով քաղաքային ինքնավարութեան անունից: Իշխան Տրուբեցկոյի հոգեհանգիստից յետոյ ուսանողները խմբով դուրս եկան փողոց, ոստիկանութիւնը խնդրեց ցրվել: Երբ որ եկան ժանդարմները, ուսանողները իսկոյն ցրվեցին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 սեպտեմբերի: (Պաշտօնական): Ս. Սինօդը կարգադրեց բոլոր հոգևոր վարչութիւններին, որ հոկտեմբերի 17-ին բոլոր եկեղեցիներում կատարվին հանդիսաւոր մաղթանքներ:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզաւոր. հ.:
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ի. Կ. ԳԶԷԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Օ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Գ. Յ. Գուրդենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան:
Ա. Մ. ՓՈՂԻՆՈՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.:
Խ. Գ. ԱԲԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.:
Վճարը 50 կ.: չքաւորները ձրի: Համախորհրդի (գօնսուլիւմ) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով:
Ելիզավետինսկայա փողոց, 101, տելեֆօն 1026
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր:
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզաւորական, կաշուի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և էլեքտրո-բուժութիւն:
Գ. Ն. ԴԵՄԻՏՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Գ. Հ. ԹԱԴԵՒՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՁԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի:
Գ. Ա. ԲԷՋԷՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և նանիների (кормилица) ընտրութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.: Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան: Պէնսիօնէլ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին համարներից:
(հ. ա. կ.) 97—100

Թարգմանել է
ՍԿՈԲԵԼՑԻՆԱՅԻ
«свобода собраній и союзовъ»
ԿՈՍՏ. ԱՊՐԻԼԵԱՆ
1—1

Կար ու ձևի ուսումնարան և
ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
Վերանորոգվում է աշակերտուհիների ընդունելութիւնը հոկտեմբերի 1-ից ժամը 11—2-ը, պարիզեան մեթոդով:
Կար ու ձևի ամբողջ կուրսը 20 ռուբլի
Պատուէրներ՝ տիկնանց և երեխայոց վերնազգեստներ և սպիտակեղէններ մատչելի գներով:
Հասցէն՝ Церковная ул. 9 уч., № 14, Н. А. Амирбековой. 1—2

ՀՐԱՒԷՐ
Զրկինանց Ս. Կարապետ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը խնդրում է ծխականներին շնորհ բերել կիրակի, հոկտեմբերի մէկին, ս. պատարագից յետոյ, ժամը ճիշտ 12-ին, նոյն եկեղեցւոյ դպրոցը՝ ծխական ժողովին մասնակցելու, ուսումնարանի բացման մասին խորհրդակցելու համար:
Նախագահ հոգաբարձութեան՝
Բժիշկ Աղեք. Ղազազեանց

Լոյս տեսաւ և վաճառվում է վրաց գրականութիւնից № 7
ԴԱՒԻԹ ԿԼԴԻԱՇՎԻԼԻ
«ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ՄԷՋ»
(Պատկեր գիւղական կեանքից)
Հեղինակի պատկերով և ինքնակենսագրութեամբ.
ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԵԿ
Դիմել՝ Тифлисъ, Кавказская книжная торговля Захарія Грикурова, իսկ Баку, «Сотрудникъ»-ին: 1—1

Ց. ԴԱՂԲԱՇԵԱՆ
I
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
Ռուսերէնից հայերէն
Գինն է 8 ր., փառակազմ 9 ր. 25 կ., ճանապարհածախսով 10 ր. 25 կ.: Հեղինակին դիմողները ճանապարհածախս չեն վճարում:
II
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
Հայերէնից ռուսերէն
Բաժանորդագրութիւնը շարունակվում է: Բաժանորդագինն է 5 ր., առաջին բառարանիս բաժանորդների և գնորդների համար 4 ր.:
III
ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ
Բաժանորդագինն է 2 ռուբ. 50 կոպէկ:
Դիմել ուղղակի հետևեալ պարզ հասցէով. Тифлисъ, А. Дагбашяну.
Ծանօթ. Բ.- հ. բառարանի յաւելուածը ուշ լոյս կը տեսնէ: Բառարանը պէտք է կազմել տալ:
(կ. ե.) 1—2

ՀՐԱՒԷՐ
Ս. Նշան եկեղեցւոյ յարգելի ծխականներից խնդրվում է, առաջիկայ կիրակի, հոկտեմբերի 1-ին, ժամի 12-ին անպայման ներկայ լինել՝ մեր եկեղեցում կայանալիք ծխական ժողովին, որի օրակարգի անյետաձգելի խնդիրներն են՝
1. Երեցփոխի 6 ամսեայ հաշուետուութեան և
2. Դպրոցական խնդիր:
Ս. Նշան եկեղեցւոյ երեցփոխ՝
Գ. Տէրջանեանց
2—2

Քաղաքային Վարչութիւնը
Սրանով յայտարարում է, որ երկուշաբթի, հոկտեմբերի 2-ին նշանակված է աճուրդ չուգունէ խողովակներ և ձևված մասեր Թիֆլիսի կայարանից քաղաքային ջրանցքի ցանցը ընդարձակելու աշխատանքների տեղը հասցնելու համար: Տեղափոխվելու են խողովակներ և ձևված մասեր մինչև 30,000 պուդ, կշռով: Պայմանների հետ կարելի է ծանօթանալ քաղաքային վարչութեան ջրանցքի բաժանմունքի գրասենեակում ամեն լի օրերը առաւօտեան 10-ից մինչ 2 ժամը ցերեկվայ: Գրաւական պահանջվում է մօտ 100 րուբլի:
(շ. կ.) 3—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը առաւ. 10—12 ժ. երեկոյեան 6—7 ժ.
Տելեֆօն № 1087
Սօլօլակ, Լերմոնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 17—150

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Կ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է բերանի և ատամների հիւանդութիւն ունեցողներին. պատրաստում է արուեստական ատամներ, քիմք, քիթ և անդամահատված ծնօտների պրօթեզներ:
Ընդունելութեան ժամերը 9—2 առաւօտեան և 4—6 երեկոյեան:
Հասցէն՝ Վանքի և Բարօնսկի փողոցների անկիւն № 10: (ա.օ.) 14—30

Մամուլի տակ է և մինչև հոկտեմբերի 10-ը լոյս կը տեսնի
Բ. տպագրութեամբ
ՄՈՍԿ. ՔԱՂ. ԴՊՐ. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ
Ժողովածուները
Ա. պրակը, փոխադրութեամբ Ա. Սպարապետեանի: Նոյն ժողովածուների Բ. և Գ. պրակները կարելի է ստանալ Թիֆլ. «Գուտտենբերգ» գրախանութում և կամ փոխադրողից՝ Тифлисъ, Абасъ-абадская площадь, домъ Темуразянцъ. 3—3

Թանդոյեանց օրիորդաց դպրոցի համար ՀԱՐԿԱՒՈՐ Է ԴԱՍԱՏՈՒ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ 12 դասի համար: Ցանկացողները դիմելու են հոգաբարձութեանը մինչև առաջիկայ երկուշաբթի օրը: Միքայէլեան փողոց № 38.
(շ. կ.) 2—2

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւնների: Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առ. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
(կ.չ.ու.) 59—100

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
պատիւ ունի յայտնելու ընկերութեան մեծարգոյ անդամներին, որ կիրակի, հոկտեմբերի 1-ին, առաւօտեան ժամը 11-ին, քաղաքային տան դահլիճում նշանակված է ընկերութեան արտակարգ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
վարչութեան հերթով դուրս գնացող և հրաժարվող անդամների փոխարէն, վերստուգող յանձնաժողովների անդամների և նրանց փոխանորդների ընտրութիւն կատարելու համար: Եթէ այս ժողովը չը կայանայ, միւս ժողովը յետաձգվում է հոկտեմբերի 8-ին, առաւօտեան ժամը 11-ին նոյն դահլիճում:
հ. շ. կ. 2—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
և ծախվում է
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԽՍԱՅԵԱՆԻ
„ՀԱՅ ԿՏՐԻՃՆԵՐԸ“
Պատկեր հայ-թուրքական կռիւներից
(24 երես)
ԳԻՆԸ 7 ԿՈՊ.
Հեղինակի մեկնելու պատճառով դիմել բացառապէս «Գուտտենբերգ» գրախանութը:
ԳՈՒՄԱՐՈՎ ԶԵՂՋ.
ու. կ. ե. 5—5

ԸՆՏԻՐ ԸՆԹԵՐՑԱՆԵԼԻ ԳՐՔՈՅԿՆԵՐ

1. «Միրտ» գրքից 9 պատմ.	գիրժան.	40 կ.
2. Ժամանակը ոսկի	պատկեր.	40 »
3. Բաց Աղասի		25 »
4. Սասունցի Յոհան	պատմ.	30 »
5. Խուլ Մաչիկ	վէպիկներ	25 »
6. Ծովինար		20 »
7. Շէն Թագաւորի աղջիկ		20 »
8. Երկու աղբերացեղ.		30 »
9. Աստուած աղքատի կերպում		20 »
10. Անմեռ աշխարհ		8 »
11. Հէքիաթներ		30 »
12. Աստուած չը ճանաչող	պատկեր.	10 »
13. Գալօ Ափօ և Խաչան		12 »
14. Երկասիրութիւններ ա. կապուկ		50 »

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին, գումարով ցանկացողները իրան՝ Քամալեանց Ս.-ին, Ներսիսեան դպրոց: (չ. ու. կ.) 3—20

Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլավնի հոգևոր սեմինարիայի դիմաց
„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ“
մականունով: Գները 70 կոպէկից մինչև 2 րուբլի: Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով:
Ալէքսանդր Ցարութինով
(հ. կ. ե.) 13—100

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գոլովինսկի պրօսպէկտի և Կաղնեսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կաղնեսկի փողոցից № 2.
(ա. օ.) 244—300

Լոյս տեսաւ
ԸՆԿԵՐ
Լ. ԼԱԶԵԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԱԾՔ
Գինը 15 կոպ.
Գումարով ցանկացողներին 50 օր. 20%, 100-ը 25%, 200-ը 30% զիջումով. առանց ճանապարհածախսի: Կարելի է և վերադիր:
Դիմել՝ Вардану Чиниджянъ фото-цинкографію С. Согомоняна Тифлисъ.
(հ. կ. ե.) 2—5

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՄ
ատլասից շինված,
որպէս զարդ ժամացոյցի շղթայից կախելու համար:
Գինն է 3 րուբլի ճանապարհածախսով:
Ապառիկ և վերադիր վճարով
ՉԷ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ:
Դիմել՝ Тифлисъ, Веляминовская 24, В. Варданяну.
(ե. հ. կ.) 6—10

ՀԱՅ ՕՐԻՈՐԴ
ցանկանում է որևէ պաշտօն ունենալ մագազիններում, կամ ընտանիքներում դաստիարակչուհի լինել: Հասցէն՝ Сергѣевская ул., д. Саркисова № 18, кв. Агаханянца.
չ. կ. 2—2

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով):

	Փոստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բաքուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 36 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գի
Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր.
Բաքու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցե
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գի
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 18 ր. գիշ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 08 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 25 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր. գիշ.
Կարս հասնելը)	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

ՀԱՍԿԵՐ
№ № 8/9. Օգոս. Սեպտ. 1906 թիւ.
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
1. ՄԵՐ ԺՕԺՕՆ Ստեփան Խաչատրեանի . . . . . .
2. ՇՆԻԿ ոտանաւոր Պետրոս Մոճոռեանի . . . . .
3. ԳԱՌՆՈՒԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՐԲԵՔ ՈՉԻՆՉ ՉԷՐ ՈՒՏՈՒՄ, ՈՉԻՆՉ ՉԷՐ ԽՄՈՒՄ . . . .
4. ՍՈՒՐ ԱԿԱՆՋ Թարգմ. Բալոնց-Մարգարի . . . . .
5. ՎԱՐԴԱՆԻ ՉՈՀԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ . . . . . .
6. ԼՃԱԿՆ ՈՒ ԱՌՒԱԿԸ Թարգմ. Սովասիլնաի. . . .
7. ԼԱՒՈՒԹԻՒՆԸ ՋՈՒՐ ՉԻ ԱՆՑ ԿԵՆԱՅ Յ. Յովհաննիսեանի .
8. ԾԵՐ ԱՐԱԳԻԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ Հեղինէ Մէլիք-Հայկազեանի
9. ԿԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԵՐԳ (պատկեր) . . . . . .
10. ԻՆՉՈՒ ՎԱՐԴԵՆՈՒ ՎՐԱ ՓՇԵՐ ԿԱՆ Թարգմ. Շ. Տ.-Ն.-ի .
11. ՀՕ, ՀՕ, ԵԶ ՋԱՆ ոտանաւոր Ս. Սարգսեանի . . .
12. ԴԵՐԻԿ ԿԱՄ ԴԷՊԻ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ, ուխտագնացութիւն—Սէյրի .
13. ՀԱՅՐԵՆԻ ԱՌԱԾՆԵՐԻՑ ԵՒ ՎԷՊԵՐԻՑ. Արտաշէս և Արտաւազդ Ստ. Լիսիցեանի. . . . .
14. ԿՆԱՆՔԻ ՕՐԷՆՔՆԵՐԸ, Արնօլդ-Ֆօրստերի . . .
15. ԴԷՍԻՑ-ԴԵՆԻՑ . . . .
16. ՋԻԱՐՃԱԼԻՔ . . . .
ՆԿԱՐՆԵՐ. պ. պ. Ախիկեանի, Երեցեանի եւ Օ. Շմերլինգի:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ
ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».
9/22-ին հոկտեմբերի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 4-ին, առաջ «Дапиве» շոգենաւը, հանդիպելով՝ Տրապիզօն, Սամսօն, Կ. Պոլիս, Դարդանէլ, Զմ Պիրէյ, Քանէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն:
Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, նոյնպէս և մինչև (Չինաստանում) Հեռաւոր Արևելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում նակի պակասեցրած գներով:
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Ցակոբեանին, Նախկին Արծրունու գալե թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608: Գրասենեակը բաց է 9—1 ժամը ցե 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից: (կ.) 1—

«Ղափանի Շրվենանց գիւղից Շուշու թեմական դպրանոցի աշակերտ Հայրապետ Մ. Ղազարեանցը բոլորովին չքաւորութեան ճանկերին մատնված լինելով՝ միանգամայն հակառակ իր բուռն ցանկութեան՝ թողնում է ուսումը: Սրանով ողորմած բարերարների ուշադրութիւնն ենք հրաւիրում և աջակցութիւնը»: Հասցէն՝ Шуша Арм. дух. Семинаріи уч. V-го к. Айрапету Газарянцу
(ե. հ. կ.) 3—5

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեան
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վե կան և մորթու հիւանդութիւնների: Ը նում է առաւօտեան 10—12, երեկոյեան Կանանց համար 12—1 ժամը:
Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Պ վէչի փողոցների, № 33/15:
(ա. օ.) 20—

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
(Тифлисъ, Сололакъ, Лермонтовская ул. № 15)
Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութ տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշ պահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:
Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն. 2) Առևտր կան Թուաբանութիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թղ բանութիւն համրիչի վրա. 5) Առևտրական Թղթակցութիւն. 6) Առևտրական և մ հակի կանօնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը:
Զրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա: Պարապմունքները կ սերում լինում են ամեն օր:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ի Ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 6 մը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը Սերգիեվսկայա և Լերմօնտովսկայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանօնա կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք մում են՝ С. П. Мануэльянцу. (կ. չ.) 24—25

ՀՐԱՒԷՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ
ԿԱՐԼ ՄԱՐՔՍ
ԿԱՊԻՏԱԼ
ՀՏՈՐ I
Հայերէն լիակատար թարգմանութեամբ եւ հրատարակութեամբ Ստրասբուրգ բանի պետակ. եւ իրաւաբ. գիտութիւնների դօքտոր
ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ
Պիտի սկսի տպագրել առաջիկայ յունվար ամսից:
Թարգմանութիւն գերմաներէն բնագրից, որը կազմում է մօտ 800 խիտ տպած էջեր՝ բազմաթիւ և մեծածաւալ ծանօթութիւններով և Մարքսի ու Էնգելսի առաջաբաններով:
Հատորը լոյս է տեսնելու 7 պրակներով՝ համեմատ հատուածների թւին, որոնց գրերն են՝
I—Ապրանք և փող (3 գլուխ), II—Փողի կապիտալ դառնալը (4 գլ.), III—Բացարձակ աւել-արժէքի արտադրութիւն (5 գլ.), IV—Յարաբերական աւել-արժէքի արտադրութիւն (4 գլ.), V—Բացարձակ ու յարաբերական աւել-արժէքի արտադրութիւն (3 գլ.), Աշխատանքի վարձը (4 գլ.), VII—Կապիտալի կուտակման պրօցէսը (5 գլ.).
Ծանօթ. Գիրքը, բացի թէօրիական նիւթը անալիզներից, պարունակում է նաև տական զարգացման տեսութիւններ՝ գլխաւորապէս անգլիական կեանքից, որպէս պէս ամենազարգացած երկրից:
ԲԱԺԱՆՈՐԴԱՎՃԱՐՆ է 3 րուբլի 50 կոպ. (=9 ֆրանկ) պօստի ծախքով մեանից մինչև առաջիկայ դեկտեմբերի վերջը բաժանորդ գրուածների և գինը համար: Գիրքը լոյս տեսնելուց յետոյ՝ գինը զգալապէս կը բարձրացվի:
Բաժանորդագրութեան համար դիմել՝ Тифлисъ, книжная торговля «Гуттенберг» հրատարակչին՝ Тифлисъ, А. М. Арасханянцу, Кадетскій пер. 11: Արտասահմանից (Russie, Caucase), Librairie «Guttenberg» և կամ Tiflis, A. M. Araskhaniantz, péréoulok 11.
Ամեն բաժանորդ՝ թէ Թիֆլիսից և թէ այլ տեղերից՝ կը ստանայ անդորրագիր 9—20
(կ. հ.)

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.

Электропечатня, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул.